



# ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՋԱԿԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԱՑՔՆԵՐ ԿԱՆԱՆՑ  
ԶԿՈՆՖԵՐԱՆՍԻՑ

**փորձարարական վերլուծություն  
և քաղաքականության առաջարկություններ**

Այս հրապարակումը պատրաստվել է Հետազոտական ռեսուրսների կոմպլեքսային կենտրոն-Հայաստան հիմնադրամի կողմից «ՀԱՎԱՍԱՐ - ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» ծրագրի «Չկոնֆերանս հանուն կանանց մասնակցության. խոսել և գործել» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում:

Ծրագիրն իրականացվում է ՕքսեՋեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդեռլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© -2024 - Հետազոտական ռեսուրսների կոմպլեքսային կենտրոն-Հայաստան հիմնադրամ:  
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Աշխատանքի կամ դրա առանձին մասերի վերահրատարակումը կամ վերարտադրությունը Էլեկտրոնային կամ տպագիր տարբերակներով պետք է իրականացվի պատշաճ մեջբերումներով:

### Մեջբերման օրինակ.

*Հետազոտական ռեսուրսների կոմպլեքսային կենտրոն-Հայաստան հիմնադրամ. (2024): Գենդերային և սոցիալական անհավասարությունների ուսումնասիրություն Հայաստանում. հայացքներ կանանց չկոնֆերանսից: Փորձարարական վերլուծություն և քաղաքականության առաջարկություններ: Երևան: Եվրոպական միություն:*

#### **Հեղինակային խումբ**

Անի Նիկողոսյան  
Արևիկ Նավոյան  
Գուրգեն Պետրոսյան  
Էմիլի Չախալյան  
Լուսինե Մարտիրոսյան  
Հայկուհի Թովմասյան  
Մարինե Գալստյան  
Նարինե Բալայան  
Շուշան Փափազյան  
Շուշանիկ Սահակյան  
Վարդուհի Տոլակյան

#### **Խմբագիրներ**

Լիլիթ Եգեկյան  
Հայկ Սմբատյան  
Եվա Թովմասյան  
Գոհարիկ Տիգրանյան

# Ամփոփագիր

Հայաստանում սոցիալական և տնտեսական քաղաքականությունների ուսումնասիրությունը բացահայտում է մի շարք հիմնախնդիրներ, որոնք Էական ազդեցություն են ունենում խոցելի խմբերի վրա: Այս խմբերի շարքում առանձնանում են կանայք, միայնակ ծնողները, տեղահանվածները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք և ԼԳԲՏ+ համայնքը:

Աղքատությունը, հատկապես՝ գյուղական համայնքներում, սահմանափակում է այս խմբերի տնտեսական հնարավորությունները: Կանայք հաճախ ներգրավված են չվճարվող տնային աշխատանքներում, ինչը խորացնում է գեղդերային անհավասարությունը: Տեղահանված անձինք բախվում են սոցիալական և հոգեբանական խնդիրների, որոնք խոչընդոտում են նրանց ինտեգրումը: Տարեցներն ու հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ են ենթարկվում խտրականության և բախվում մատչելի ծառայությունների բացակայության խնդրին: ԼԳԲՏ+ համայնքի անդամները հաճախ են հանդիպում խտրականության բարձր մակարդակի, ինչը խաթարում է նրանց սոցիալական ներառումը: Այս բոլոր խնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ են համապարփակ ռազմավարություններ, որոնք ուղղված կլինեն խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանը և նրանց հնարավորությունների ընդլայնմանը:

# Ներածություն

Անցած տասնամյակում Հայաստանի Հանրապետությունն իրականացրել է Էական բարեփոխումներ՝ ուղղված ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը և ազատ շուկայական հարաբերությունների զարգացմանը: Այս փոփոխությունները որոշ ոլորտներում, ինչպես օրինակ՝ գենդերային հավասարության ուղղությամբ, ապահովել են որոշակի առաջընթաց: Այնուամենայնիվ, երկիրը դեռևս բախվում է մարտահրավերների՝ մշակելու համապարփակ ազգային քաղաքականություններ, որոնք կարող են արդյունավետորեն լուծել գենդերային հավասարության և խտրականության խնդիրները:

Սակայն վերջին տարիներին, մասնավորապես՝ 2020 թ. COVID-19 համավարակն ու 44-օրյա պատերազմը, հետ մղեցին այս բարեփոխումների օրակարգը: Այս իրադարձությունները հարուցեցին նոր քաղաքական, տնտեսական և հոգեւոցիալական մարտահրավերներ, որոնք սրեցին առկա խնդիրները և բազմակի ճգնաժամեր առաջացրին: Դրանք անմիջականորեն անդրադարձան կանանց իրավունքների վրա՝ խոչընդոտելով գենդերային հավասարության ուղղությամբ առաջընթացը:

Ընթացիկ իրավիճակը մտահոգիչ է կանանց հզորացման հնարավոր հետընթացի առումով: Համավարակը և պատերազմը/ռազմականացման գործընթացը զգալիորեն ազդել են կանանց հասարակական և տնտեսական դերի վրա: Նախկին տնտեսական ճգնաժամերի փորձը հուշում է գենդերային պահպանողական նորմերին վերադարձի հավանականության մասին, ինչը կարող է խորացնել գենդերային անհավասարությունը:

Այս մարտահրավերներին դիմագրավելու համար անհրաժեշտ է համապարփակ մոտեցում, որը կներառի ոչ միայն անհատական մակարդակում գենդերային անհավասարության հաղթահարման քայլեր, այլև Էականպես կբարելավի խոցելի խմբերի, այդ թվում՝ կանանց և աղքիկների, կյանքի վրա ազդող քաղաքականությունները: Խոցելի խմբերում ընդգրկված են աղքատության պայմաններում ապրող կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, Արցախից բռնագաղթած կանայք, ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչներ, տարեց կանայք, տևային աշխատանքով զբաղվողները, անկայուն կամ ժամանակավոր զբաղվածություն ունեցողները, ամուսնալուծվածները, պատերազմի հետևանքով հարազատներ կորցրածները և գործազուրկ կանայք:

Կանանց, աղջիկների և կին նույնականացող անձանց կյանքի որակի բարելավման համար անհրաժեշտ է համապարփակ ռազմավարություն, որը կլուծի աշխատանքի, սոցիալական պաշտպանության և գեղեցիկ հավասարության հիմնախնդիրները: Կանանց նվազեցված ներկայությունը աշխատաշուկայում պայմանավորված է չվճարվող տնային աշխատանքներով: Համաաշխարհային բանկի գեկույցի համաձայն, 25-34 տարեկան կանանց շրջանում տնտեսական ակտիվության նվազումը համընկնում է երեխա ունենալու տարիների հետ: Այս խնդիրը խորանում է մանկապարտեզների ցածր հաճախելիությամբ, որը հատկապես գյուղական համայնքներում կազմում է ընդամենը 17.2%<sup>1</sup>:

Ամուսնական կարգավիճակն Էական ազդեցություն ունի կանանց զբաղվածության վրա: Հայաստանում աշխատող կանանց մեծ մասը ամուսնալուծված է, մինչդեռ երեխաներ ունեցող ընտանիքներում հատկապես մայրերը քիչ հնարավորություն ունեն ընդգրկվելու աշխատաշուկայում երեխաների խնամքի պարտականությունների պատճառով:

Կանանց շրջանում չգրանցված աշխատանքը, հատկապես գյուղատնտեսության ոլորտում, խոչընդոտում է նրանց սոցիալական և աշխատանքային իրավունքների պաշտպանությանը: Այս ոլորտում կանանց մեծամասնությունը զբաղված է ընտանեկան ֆերմաներում կամ փոքր բիզնեսներում դուրս մնալով արհմիություններից և սոցիալական պաշտպանություն տրամադրող այլ մեխանիզմներից<sup>2</sup>: Չգրանցված աշխատողների՝ պաշտոնական աշխատաշուկա ինտեգրումը կարևոր է նրանց իրավունքների պաշտպանության և զբաղվածության կայունության ապահովման համար:

Գեղեցիկ անհավասարությունը շարունակվում են պահպանվել աշխատաշուկայում, որտեղ տղամարդիկ գերակշռում են բարձր եկամուտ ապահովող տեխնիկական ոլորտներում և ղեկավար պաշտոններում<sup>3</sup>: Կանայք հիմնականում ներգրավված են չվճարվող կամ ցածր վարձատրվող ընտանեկան աշխատանքներում, ինչը խանգարում է նրանց սոցիալական պաշտպանությունից օգտվելուն: Այս խնդիրների լուծումը պահանջում է իրավունքների վրա հիմնված մոտեցում և քաղաքականության բարեփոխումներ՝ ապահովելու բոլոր սեռերի հավասար հնարավորությունները:

1. European External Action Service. Country Gender Profile: Armenia. EU4Gender Equality Reform Helpdesk Project, funded by the European Union and implemented by NIRAS, August 2021.

[https://www.eeas.europa.eu/sites/default/files/documents/Country%20Gender%20Profile\\_%20ARMENIA\\_ENG.pdf](https://www.eeas.europa.eu/sites/default/files/documents/Country%20Gender%20Profile_%20ARMENIA_ENG.pdf)

2. Food and Agriculture Organization of the United Nations. UN Report Finds Gender Inequalities Persisting in Rural Armenia. June 2, 2017.

<https://www.fao.org/europe/news/detail/UN-report-finds-gender-inequalities-persisting-in-rural-Armenia/en>.

3. UN Women. Country Gender Profile: Armenia. 2023. <https://www.unwomen.org/en/countries/armenia>.

# Մեթոդաբանություն

Կանանց տարբեր խմբերի խնդիրները հասկանալու և դրանց լուծման անհատականացված մոտեցումներ մշակելու նպատակով, առանձնացվել է ինը հիմնական թեմա, որոնց շուրջ կազմակերպվել են քննարկումներ: Այս թեմաները ներառում են ԼԳԲՏ+ համայնքի խնդիրները և հանդուրժողականության հարցերը, պատերազմի հիշողությունները և վերականգնման գործընթացը, տարեցների դերն ու մասնակցությունը հասարակությունում, բռնի տեղահանումը և պատկանելության զգացումը, տնային աշխատանքը և արժանապատվությունը, հաշմանդամությունը և ներառումը, միայնակ ծնողավարությունը և ինքնագարգացումը, գործազրկությունը և կարիերայի հմտությունների զարգացումը, ինչպես նաև աղքատությունը և տնտեսական ինքնուրույնությունը<sup>4</sup>:

Տվյալների հավաքագրման ողջ ընթացքում օգտագործվել են բացառապես որակական հետազոտական մեթոդներ, այդ թվում՝ խմբային քննարկումներ, գրականության ու իրավական դաշտի վերլուծություն, ինչպես նաև խորքային հարցազրույցներ: Քննարկումների ընթացքում ստացված տեղեկատվությունը համադրվել է առկա գրականության և իրավական դաշտի վերլուծությունների հետ: Որոշ դեպքերում իրականացվել են նաև խորքային հարցազրույցներ՝ հավելյալ տվյալներ ձեռք բերելու նպատակով:

4. Այսպես թեմաները տեքստի բոլոր հատվածներում չկրկնելու համար, դրանք կողավորվում են համապատասխան թվերով՝

- տարեցներ և հասարակություն
- աղքատություն և տնտեսական ինքնուրույնություն
- գործազրկություն և կարիերայի հմտություններ
- տնային աշխատանք և արժանապատվություն
- միայնակ ծնողավարում և ինքնագարգացում
- հաշմանդամություն և ներառում
- բռնի տեղահանում և պատկանելության զգացում
- կորուստ, պատերազմի հիշողություն և վերականգնում
- ԼԳԲՏ+ համայնքի խնդիրներ և հանդուրժողականություն

# Սահմանափակումներ

Քաղաքականության վերլուծության այս փաստաթղթին ծանոթանալիս կարևոր է հաշվի առնել դրա որոշ սահմանափակումները և վերապահումները: Փաստաթուղթը պատրաստվել է «Չկոնֆերանս հանուն կանանց մասնակցության. խոսել և գործել» ծրագրի շրջանակում ձևավորված երիտասարդ կին ակտիվիստների կողմից՝ որպես փորձարարական վարժանք, և հիմնված է նույն ծրագրի շրջանակներում կազմակերպված բաց ձևաչափով Չկոնֆերանսի արդյունքների վրա: Հեղինակները չեն հավակնում, որ այս փաստաթուղթը դիտարկվի որպես մասնագիտական վերլուծություն, ուստի առաջարկում են այն ընթերցել՝ նկատի ունենալով հետևյալ սահմանափակումները.

- Թեև ոլորտային իրավական կարգավումներն ու օրենսդրական դաշտը երկրորդային վերլուծության են ենթարկվել, փաստաթղթում կարող են չարտացոլվել օրենսդրա-իրավական դաշտին վերաբերող որոշ հարցեր կամ ամենաթարմ կարգավորումները:
- Վիճակագրական և հետազոտական տվյալների հավաքագրման մոտեցումը համապարփակ չէ, և հնարավոր է, որ փաստաթղթում ներառված չլինեն քննարկվող թեմաներին վերաբերող ամենավերջին ուսումնասիրությունները կամ վիճակագրական տվյալները:
- Փաստաթղթի բովանդակության հիմքը ծրագրի շրջանակում Չկոնֆերանսի աշխատարաններում իրականացված դիտարկումներից ստացված առաջնային տվյալներն են: Դրա արդյունքում որոշ թեմաների ներկայացումը կարող է լինել կամ չափազանց ընդհանուր, կամ բավականին նեղ՝ կախված աշխատարանների մասնակիցների ընտրած քննարկման մակարդակից:
- Ներկայացված առաջարկությունները որոշ դեպքերում կարող են լինել անհասցե, բավարար չափով կոնկրետ չլինել կամ ամբողջությամբ չհամապատասխանել արդեն իսկ իրականացվող ծրագրերին և բարեփոխումներին: Սա պայմանավորված է փաստաթղթի փորձարարական բնույթով, որի առաջնային նպատակը մասնակցած կանանց ակտիվացումն ու հզորացումն է, այլ ոչ թե մասնագիտական կամ փորձագիտական դրույթներ պարունակող վերլուծական նյութ ստեղծելը:

# Քաղաքականության համատեքստ

**(1).** Հայաստանի Հանրապետությունում տարեց անձանց իրավունքների և բարեկեցության ապահովման մի շարք իրավական և քաղաքական շրջանակներ են գործում: ՀՀ Սահմանադրությունը (2015թ.) արգելում է խտրականությունը, ներառյալ՝ տարիքի հիմքով, և երաշխավորում է արժանապատիվ կյանքի իրավունքը<sup>5</sup>: «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը (2014թ.) անդրադառնում է տարեցների խնդիրներին<sup>6</sup>, իսկ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքը (2011թ.) կարգավորում է 63 տարեկանից բարձր անձանց կենսաթոշակային համակարգը: Կառավարության որոշումները երաշխավորում են տարեցների համար տնային և հաստատական ինսամբ<sup>7</sup>, ի թիվս ինսամբի այլ տեսակների: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում գործում է տարեցների հիմնախնդիրներով զբաղվող բաժին, և Հայաստանը մասնակցում է մի շարք միջազգային կոնվենցիաների: Այնուամենայնիվ, ինսամբի համակարգում առկա են բացեր, հատկապես առողջապահության և ֆինանսական կայունության ոլորտներում, ինչպես նաև անհրաժեշտ է հասարակական կարծրատիպերի հաղթահարում:

**(2).** Հայաստանի Հանրապետությունում աղքատության և տնտեսական անկախության ապահովման քաղաքականությունը վերջին տարիներին կենտրոնանում է գյուղաբնակների և կանանց տնտեսական հնարավորությունների զարգացման վրա: Աղքատության մակարդակը 2023 թվականին նվազել է 1%-ով՝ հասնելով 23.7%-ի, իսկ ծայրահեղ աղքատությունը կազմել է 1.1%: Գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակը մնում է ավելի բարձր՝ 27%<sup>8</sup>: Կանանց տնտեսական անկախության խթանման ոլորտում հիմնական խոչընդոտներն են մանկապարտեզների անհասանելիությունը և հասարակական կարծրատիպերը, որոնք խանգարում են նրանց աշխատաշուկայում մասնակցությանը<sup>9</sup>:

Վերջին տարիներին Հայաստանը քայլեր է ձեռնարկել բազմաչափ աղքատության հաղթահարման ուղղությամբ: 2023 թվականի տվյալներով, բնակչության մոտ 27.8%-ը բազմաչափ աղքատ է: Կանայք հաճախ ավելի խոցելի են՝ պայմանավորված կրթության, առողջապահության և տնտեսական հնարավորությունների սահմանափակ հասանելիությամբ<sup>10</sup>: Չնա-

5. Constitution of the Republic of Armenia, 2015. <https://www.president.am/en/constitution-2015/>.

6. Law on Social Assistance, Republic of Armenia, 2014. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=94972>.

7. Law on Funded Pensions, Republic of Armenia, 2010. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=182319>.

8. Saghumyan, Lusine. "Women and the Economy: The Intellectual Capital of Armenia." EVN Report. August 25, 2023. <https://evnreport.com/economy/women-and-the-economy-the-intellectual-capital-of-armenia/>.

9. Նույն տեղում:

10. United Nations Development Programme (UNDP). 2023 Global Multidimensional Poverty Index (MPI): Unstacking Global Poverty: Data for High Impact Action. New York, 2023. <https://hdr.undp.org/content/2023-global-multidimensional-poverty-index-mpi>.

յաճ աղքատության նվազման ուղղությամբ որոշակի առաջընթացին՝ կանանց տնտեսական հզորացումը մնում է առաջնահերթ մարտահրավեր:

**(3).** Խորհրդային Միության փլուզումից հետո կանայք Հայաստանում բախվել են աշխատաշուկայում լուրջ դժվարությունների: Թեև կանայք կազմում են աշխատուժի 54%-ը, 2023 թվականի տվյալներով՝ նրանց 52%-ը երբեք չի աշխատել կամ աշխատանք չի փնտրել, իսկ 43%-ը զբաղված է չվճարվող տնային աշխատանքներով: Զբաղվածությունն ունեցող կանայք հիմնականում կենտրոնացած են ծառայությունների ոլորտում (67%), մինչդեռ գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում նրանց մասնակցությունը սահմանափակ է<sup>11</sup>: Աշխատավարձերի հարցում գեղեցիկային անհավասարությունը նույնպես խորացնում է խնդիրը. նույն պաշտոնում կանայք միջինում վաստակում են տղամարդկանց աշխատավարձի 60.8%-ի չափով<sup>12</sup>:

Բացի դրանից, հասարակական ակնկալիքներն ու մանկապարտեզների սահմանափակ ենթակառուցվածքները, հատկապես գյուղական վայրերում, խոչընդոտում են կանանց աշխատաշուկայում լիարժեք ներգրավմանը<sup>13</sup>:

**(4).** Հայաստանում տնաշխատների աշխատանքային իրավունքների պաշտպանությունը մնում է թերի, ինչը պայմանավորված է աշխատանքային պայմանագրերի բացակայությամբ, ցածր վարձատրությամբ և սոցիալական պաշտպանության երաշխիքների բացակայությամբ: Այս խոցելի իրավիճակը մեծացնում է շահագործման և խտրականության ռիսկը: Անիրաժեշտ է պետական մակարդակով ընդունել խիստ օրենսդրական փոփոխություններ, որոնք պարտադիր կդարձնեն աշխատանքային պայմանագրերի կնքումը և սոցիալական պաշտպանությունը: Միջազգային չափանիշների, այդ թվում՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության 189-րդ կոնվենցիայի հիման վրա, կարևոր է ներդնել այնպիսի քաղաքականություններ, որոնք կհաստատեն աշխատողների իրավունքների պաշտպանությունն ու կնպաստեն աշխատաշուկայում խտրական վերաբերմունքի վերացմանը<sup>14</sup>:

**(5).** Հայաստանում միայնակ ծնողներին աջակցելու գործող քաղաքականությունը հիմնականում սահմանափակվում է ընդհանուր սոցիալական ապահովության ծրագրերով, որոնք չեն անդրադառնում նրանց առանձնահատուկ կարիքներին: 1997 թվականին միայնակ մայրերին ուղղված պետական նպաստների տրամադրման նախկին կարգը վերացվել է՝ առանց համապատասխան իրավական փոխարինման: «Պետական նպաստների մասին» 2014 թվականի օրենքում բացակայում են միայնակ ծնողների հստակ սահմանումները, ինչը դժվարացնում է նրանց սոցիալական ծառայություններից և նպաստներից օգտվելու հնարավորությունները<sup>15</sup>: Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ միայնակ ծնողները մեծամասամբ կանայք են, ովքեր հաճախ սոցիալապես անապահով են և դժվարություններ են ունենում աշխատաշուկայում մուտքի և կրթական հնարավորություններից օգտվելու հարցում<sup>16</sup>:

11. JAMnews. "Equality Day: 52% of Armenian Women Unemployed, Never Intended to Work." JAMnews. Մարտի 9, 2024.

<https://jam-news.net/equality-day-52-of-armenian-women-unemployed-never-intended-to-work/>.

12. Նույն տեղում:

13. European Training Foundation (ETF). Platform Work in Armenia. 2021. [https://www.etf.europa.eu/sites/default/files/2021-06/platform\\_work\\_armenia\\_1.pdf](https://www.etf.europa.eu/sites/default/files/2021-06/platform_work_armenia_1.pdf).

14. International Labour Organization (ILO), Domestic Workers Convention, 2011 (No. 189), adopted June 16, 2011, entered into force September 5, 2013, available at [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:12100::NO:12100:P12100\\_ILO\\_CODE:C189](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:12100::NO:12100:P12100_ILO_CODE:C189).

15. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով. «Պետական նպաստների մասին» (ՀՕ-154-Ն). Հաստատվել է 2014 թ. հունվարի 1-ին: <https://parliament.am/legislation.php?sel=show&ID=4864&lang=arm>.

16. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե. «Հայաստանի սոցիալական վիճակագրություն 2023»: Երևան: Վիճակագրական կոմիտե, 2023 թ. <https://armstat.am>.

**(6).** Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությունն ու ներառական կրթությունը Հայաստանում պետության քաղաքականության առաջնահերթություններից են: ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի վավերացումից (2010 թ.) հետո մշակվեցին մի շարք քաղաքականություններ<sup>17</sup>, այդ թվում «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարական ծրագիրը»<sup>18</sup> և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» 2014թ. օրենքը: Այս քայլերն ուղղված են հաշմանդամ անձանց համար հավասար հնարավորությունների ապահովմանը<sup>19</sup>:

**(7).** Տեղահանված անձանց ինտեգրման քաղաքականության ոլորտում առկա են մի շարք լուրջ խնդիրներ: Դրանք ներառում են խտրականության և կարծրատիպերի դեմ պայքարի մեխանիզմների բացակայությունը, որն առաջացնում է հասարակական պառակտումներ, ինչպես նաև հաղորդակցության հստակ ռազմավարության պակասը: Տեղահանվածների աջակցման ոլորտում հոգեբանների և սոցիալական աշխատողների վերապատրաստման սահմանափակ հնարավորություններն ազդում են ծառայությունների որակի վրա: Փախստականի կարգավիճակի անորոշությունը նույնպես խոչընդոտում է երկարաժամկետ կայունության ձևավորմանը:

**(8).** Լեռնային Ղարաբաղից տեղահանված մարդիկ կանգնած են ինտեգրման լուրջ մարտահրավերների առջև: Տարիներ շարունակ անորոշության պայմաններում ապրելուց հետո նրանք կորցրել են իրենց տները, ունեցվածքը և սոցիալական կապերը, ստիպված են եղել տեղափոխվել Հայաստան՝ փախչելով անմիջական վտանգներից և հումանիտար ճգնաժամներից: Նոր միջավայրում ինտեգրումը ևս դժվար է, քանի որ նրանց սպասվում են սոցիալ-տնտեսական խոչընդոտներ, ինչպես նաև լեզվական և մշակութային տարբերություններ, որոնք խոչընդոտում են արագ հարմարվելուն: Պատերազմի և տեղահանության հետևանքով առաջացած հոգեբանական տրավմաները ծանր ազդեցություն են ունենում նրանց կյանքի որակի վրա: Միաժամանակ, նրանք հաճախ շատ կախված են պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցությունից, որը, չնայած կարճաժամկետ լուծումներ է առաջարկում, չի ապահովում երկարաժամկետ կայունություն:

**(9).** Հայաստանում ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչները շարունակում են մնալ խոցելի խումբ՝ ենթարկվելով խտրականության և բռնության կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Նրանց խնդիրները կապված են թե՛ իրավական, թե՛ սոցիալական տիրույթներում առկա բացերի հետ: Խտրականությունը առավելապես դրսևորվում է ընտանիքում, առողջապահության ոլորտում, ոստիկանությունում, զինված ուժերում և կրթական հաստատություններում, ինչը հանգեցնում է շարունակական մարգինալացման: Չնայած Հայաստանը վավերացրել է մարդու իրավունքների պաշտպանության մի շարք միջազգային փաստաթղթեր, ԼԳԲՏ+ համայնքի իրավունքների պաշտպանությունը դեռևս բավարար մակարդակի վրա չէ: Պետական մարմինների կողմից այս խնդիրների մասին չխոսելը նպաստում է անպատժելիությանը և ատելության մթնոլորտի խորացմանը:

17. United Nations, "Convention on the Rights of Persons with Disabilities," December 13, 2006,

<https://www.un.org/development/desa/disabilities/convention-on-the-rights-of-persons-with-disabilities.html>.

18. ՀՀ կառավարության «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարական ծրագիր», <https://www.arlis.am/documentview.aspx?docid=90419>.

19. ՀՀ օրենքը «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», 2014թ., <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166>.

# ԽՆդիրների վերլուծություն

**(1).** Հասարակության յուրաքանչյուր անդամի հանդեպ հոգատարությունն ու խնամքը հանդիսանում են հանրային առողջության և պետական քաղաքականության կարևոր բաղադրիչներ: Հայաստանում տարեց մարդիկ համարվում են խոցելի խումբ, և նրանց իրավունքները ամրագրված են երկրի իրավական փաստաթղթերում: ՀՀ օրենքի համաձայն՝ տարեց E համարվում 65 տարին լրացած անձը<sup>20</sup>, իսկ Հայաստանի ծերացող բնակչության համատեքստում անհրաժեշտ է վերանայել առաջնահերթությունները՝ նրանց կարիքներին արդյունավետ կերպով արձագանքելու համար: Չնայած առկա օրենսդրական միջոցառումներին, ինչպիսիք են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «տարեցների հիմնահարցերի» բաժինը և տարեցներին նվիրված տոնը, տարեցները շարունակում են բախվել բազմաթիվ խնդիրների: Այս խնդիրները, որոնք վերաբերում են իրավական, առողջապահական և սոցիալական ոլորտներին, վկայում են համակարգային բացերի մասին, որոնք պահանջում են անհապաղ լուծում:

Տարեցները հաճախ բախվում են մի շարք իրավական խնդիրների, այդ թվում ժառանգության իրավունքի չիմացությունը, քանի որ տարեցներից շատերը տեղյակ չեն իրենց ժառանգական իրավունքների մասին, ինչը հաճախ հանգեցնում է չկարգավորված ժառանգականության: Նրանք նաև կարող են չիմանալ ալիմենտ պահանջելու իրավունքի մասին, ինչը կարող է նրանց ֆինանսական անկայունության պատճառ դառնալ: Ռենտայի պայմանագրի իրավունքի չիմացությունը նույնպես խնդիր է, քանի որ շատ տարեցներ չեն գիտակցում այդ հնարավորությունը, որը թույլ է տալիս մշտական վճարումներ ստանալ գույքի դիմաց: Բռնությունից պաշտպանվելու իրավունքի չիմացություն ևս վտանգավոր է, քանի որ տարեցները հաճախ չգիտեն, որ ունեն իրավունք՝ պաշտպանվելու ֆիզիկական, հոգեբանական կամ սեռական բռնություններից, ինչը խոչընդոտում է նրանց ինքնապաշտպանությունը:

Այս իրավական խնդիրները խորանում են առողջապահական և հոգեբանական բարդությունների համատեքստում, որոնք մեծ ազդեցություն են ունենում տարեցների կյանքի որակի վրա: Տարեցների հիվանդությունների չճանաչումը, բժշկական ապահովագրության բացակայությունը և մատչելի առողջապահական ծառայությունների պակասը հաճախ սրում են նրանց առողջական վիճակը՝ հանգեցնելով ուշացած ախտորոշումների և չկանխարգելված հիվանդությունների:

20. «Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք» (2014 թ., դեկտեմբերի 17), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=94972>.

Այս խնդիրները նաև սրվում են սոցիալական ոլորտում առկա դժվարություններով, ինչպիսիք են աշխատանքի հնարավորությունների և ժամանցային կենտրոնների բացակայությունը, ինչպես նաև հասարակության մեջ տարածված կարծրատիպերը, որոնք խոչընդոտում են տարեցների ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքում:

Հասարակության յուրաքանչյուր անդամի հանդեպ հոգատարությունը կարևոր դեր ունի պետական քաղաքականության մեջ, և տարեց մարդիկ Հայաստանում համարվում են խոցելի խումբ: Չնայած իրավական և օրենսդրական միջոցառումներին, ինչպես նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցառումներին տարեց մարդկանց սոցիալական պաշտպանության և ներգրավման ուղղությամբ, տարեցները շարունակում են բախվել մի շարք հիմնախնդիրների:

**(2).** Աղքատության խնդրի վերաբերյալ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է կիրառել մի շարք ցուցանիշներ, որոնք արտացոլում են խնդրի խորությունը և ազդեցությունը: Խոցելի խմբերի իրավունքները պաշտպանված են ՀՀ իրավական ակտերով: Համաշխարհային պրակտիկայում ընդունված է աղքատության սահմանման երեք հիմնական հասկացություն՝ բացարձակ, հարաբերական և բազմաչափ աղքատություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կիրառական նշանակությունը:

- 1. Բացարձակ աղքատություն** սահմանվում է նվազագույն եկամտի շեմ, որն անհրաժեշտ է մարդու հիմնական կարիքները բավարարելու համար: 2023 թվականին Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 23.7%, ինչը 1%-ով պակաս է 2022-ի համեմատ: Այնուամենայնիվ, գյուղական համայնքներում այս ցուցանիշը 27% է, ինչը վկայում է, որ աղքատությունը գյուղերում զգալիորեն ավելի բարձր է, քան քաղաքային բնակավայրերում (21.5%)<sup>21</sup>:
- 2. Հարաբերական աղքատությունը** արտացոլում է եկամուտների անհավասար բաշխումը և համեմատվում է միջին եկամուտների հետ: Չնայած ընդհանուր աղքատության նվազմանը, հարաբերական աղքատությունը մնում է բարձր, ինչը ցույց է տալիս, որ եկամուտների անհավասարությունը շարունակում է մեծ ազդեցություն ունենալ: Օրինակ՝ ԱՄՆ-ում հարաբերական աղքատության շեմը կազմում է միջին եկամտի 40%-ը, իսկ եվրոպական երկրներում 50%-60%<sup>22</sup>: Հայաստանում հարաբերական աղքատությունը հատկապես արտահայտվում է գյուղական և քաղաքային համայնքների միջև կյանքի որակի տարբերություններով: Գյուղական բնակչության 33%-ը աղքատ է, մինչդեռ քաղաքային բնակավայրերում այս ցուցանիշը կազմում է 21.8%<sup>23</sup>:
- 3. Բազմաչափ աղքատությունը** ներառում է ոչ միայն եկամուտների գնահատումը, այլև սոցիալական զրկանքները, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը և բնակարանային պայմանները: Այն ապահովում է աղքատության համապարփակ վերլուծություն՝ ընդգծելով, թե ինչպես են տնտեսական և սոցիալական գործոնները միասին ազդում մարդկանց կյանքի որակի վրա:

21. ՀՀ Վիճակագրական կոմիտե, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2024թ.», (Երևան: ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2024):

22. Հոմեր Է. Մունդել, Poverty Measurements in Western Economies, (Լյու Յորք: Հարվարդ համալսարանի հրատարակչություն, 2016), 87-89:

23. ՀՀ Վիճակագրական կոմիտե, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2024թ.:

**Գյուղական և քաղաքային աղքատության տարբերությունները.** Գյուղական համայնքներում աղքատության մակարդակը զգալիորեն բարձր է՝ 27%, համեմատած քաղաքային համայնքների՝ 21.5%-ի հետ<sup>24</sup>: Գյուղական բնակավայրերում աղքատության բարձր ցուցանիշը պայմանավորված է ենթակառուցվածքների բացակայությամբ, կրթական և առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիությամբ, ինչպես նաև տնտեսական հնարավորությունների սակավությամբ: Գյուղատնտեսուները, որը գյուղական բնակչության հիմնական զբաղմունքն է, խիստ կախված է սեզոնային պայմաններից, ինչն էլ խորացնում է եկամտային անկայունությունը և նպաստում աղքատության վերարտադրմանը:

**Կանանց կարգավիճակն ու աղքատությունը.** Կանայք, հատկապես գյուղական շրջաններում, հանդիսանում են առավել խոցելի խմբերից մեկը: Նրանք հաճախ զբաղված են չվճարվող տնային աշխատանքով, ինչը սահմանափակում է նրանց տնտեսական ակտիվությունը և նվազեցնում եկամուտ ստանալու հնարավորությունները: Կանանց դերի թերազնահատումը տնտեսության մեջ և մասնագիտական զարգացման սահմանափակումները նպաստում է աղքատության խորացմանն ու վերարտադրմանը<sup>25</sup>:

Կրթության հասանելիության սահմանափակումները նույնպես նպաստում են աղքատության խորացմանը, Շատ կանայք հնարավորություն չունեն շարունակելու կրթությունը կամ զարգացնելու մասնագիտական հմտությունները, ինչը սահմանափակում է նրանց ներգրավվածությունը աշխատաշուկայում և խորացնում սոցիալական ու տնտեսական անհավասարությունները<sup>26</sup>:

**Աղքատության մշակույթ.** Աղքատության վերարտադրման գործում կարևոր դեր է խաղում մշակույթային գործոնը, որը նպաստում է կարծրատիպերի պահպանմանը: Աղքատ ընտանիքներում երեխաները հաճախ սոցիալիզացվում են իրենց շրջապատող միջավայրում, ինչը սահմանափակում է նրանց հնարավորությունները դուրս գալու աղքատության շրջանից<sup>27</sup>: Այս երևույթը հատկապես ընդգծված է գյուղական համայնքներում, որտեղ մշակույթային և սոցիալական նորմերը սահմանափակում են կանանց և երիտասարդների տնտեսական ակտիվությունը և զարգացման հեռանկարները:

**Տնտեսական ինքնուրույնության բացերը.** Գյուղական համայնքներում տնտեսապես ինքնուրույն լինելու հնարավորությունը խիստ սահմանափակ է: Փոքր բիզնեսների և տնտեսական գործունեության զարգացումը հաճախ խոչընդոտվում է իրավական և ֆինանսական անկայունությամբ: Կանանց գործարարության խթանման ծրագրերի բացակայությունը, ինչպես նաև տնտեսական աջակցության սակավությունը, խորացնում են աղքատությունը: Այս խնդիրներն ուղղակիորեն կապված են գյուղական շրջաններում կայուն տնտեսական հնարավորությունների բացակայության հետ<sup>28</sup>:

Աղքատության խորքային խնդիրներն ու տնտեսական անհավասարությունը առավել ընդգծված են գյուղական համայնքներում, որտեղ սահմանափակ հնարավորությունները առավել մեծ ազդեցություն են ունենում կանանց և խոցելի այլ խմբերի վրա: Աղքատության բազմաչափ բնույթը պահանջում է համապարփակ մոտեցում, որն ընդգրկում է կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության բարելավում: Այս

24. ՀՀ Կիճակագրական կոմիտե, «Աղքատության ցուցանիշներ Հայաստանի մարզերում», (երևան: 168.am, 2023):  
25. Էլեն Բարխուդարյան, «Կանանց դերը և աղքատության վերարտադրումը», Գեոգրային Հասարակագիտության Ակադեմիկներ, (2020), 52-55:  
26. Նույն տեղում:  
27. Օսկար Լյուիս, The Culture of Poverty, (Լյու Յորք: Վիլտաժ Բուքս, 2010), 37-40:  
28. ՀՀ Կիճակագրական կոմիտե, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2024թ.»:

միջոցառումները կարևոր են ոչ միայն աղքատության կրճատման, այլև հասարակության ընդհանուր զարգացման համար:

**(3).** Հայաստանում գործազրկության խնդիրը հատկապես ընդգծված է գյուղական շրջաններում: Շիրակում, Լոռիում և Գեղարքունիքում, գործազրկության մակարդակը գերազանցում է միջին ցուցանիշը: Այս մարզերը տարիներ շարունակ բախվում են տնտեսական լճացման, ենթակառուցվածքների անբավարար զարգացման և աշխատատեղերի ստեղծման սահմանափակումներին: 2023 թվականի տվյալներով, Շիրակի մարզում 9,571 մարդ աշխատանք էր փնտրում, որոնցից 7,201-ը գործազուրկի կարգավիճակ ունեին, ինչը կազմում է հանրապետությունում գործազուրկների 16.2%-ը<sup>29</sup>: Տարածաշրջանային առումով, մայրաքաղաք Երևանում գործազրկության մակարդակը համեմատաբար ցածր է՝ պայմանավորված կրթության, ծառայությունների և աշխատատեղերի հասանելիության ավելի լայն հնավորություններով: Սա վկայում է տարածաշրջանային տնտեսական անհավասարությունների մասին, որոնք խոչընդոտում են համաչափ զարգացմանը:

Կանանց մասնակցությունը աշխատաշուկայում շարունակում է մնալ խնդրահարույ, հատկապես գյուղական վայրերում: Կանանց հիմնական զբաղվածությունը կենտրոնացած է ցածր վարձատրվող կամ չվճարվող տնային աշխատանքի վրա, ինչը սահմանափակում է նրանց մասնագիտական աճն ու կայուն զբաղվածության հնարավորությունները<sup>30</sup>: Տնային տնտեսությամբ զբաղվող կանայք կամ մանկապարտեզների հասանելիության բացակայության պատճառով տանը մնացողները առավել խոցելի են աղքատության և գործազրկության հանդեպ: Համաշխարհային բանկի տվյալներով՝ կանանց տնտեսական ակտիվության ամենամեծ անկումը նկատվում է 25-34 տարիքային խմբում, ինչը համընկնում է մայրանալու շրջանի հետ: Սա նաև սրում է ծնողներին ուղղված քաղաքականությունների և ընտանեկան աջակցության համակարգերի բացակայության խնդիրը<sup>31</sup>:

Հայաստանում **մասնագիտական կրթության և ուսուցման (VET) համակարգը դեռևս բավարար ուշադրություն չի ստացել**, չնայած դրա կարևորությունը աշխատաշուկայի պահանջներին համահունչ հմտություններ ձեռք բերելու համար: Սա հատկապես կարելի է երիտասարդների համար, որոնց շրջանում գործազրկության մակարդակը շարունակում է բարձր մնալ՝ 33.3% կանանց և 31.6% տղամարդկանց շրջանում: Որակյալ զբաղվածության կամ աշխատանքային հնարավորությունների բացակայությունը նպաստում է աշխատանքային միգրացիայի աճին: Սա առավելապես ակնհայտ է Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում համեմատած Արևելյան գործընկերության մյուս երկրների հետ<sup>32</sup>:

Չնայած Բոլոնիայի գործընթացին միանալուն, Հայաստանի կրթական համակարգի արդիականացման ընթացքը դեռևս լիարժեք արդյունքներ չի տվել: Ակադեմիական ծրագրերը հաճախ չեն համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին, իսկ ուսումնական պլանները չեն ուղղվում այն ոլորտներին, որտեղ անհրաժեշտ են մասնագետներ: Այս անհամապատասխանությունը խոչընդոտում է շրջանավարտների մասնագիտական աճին և երկրի տնտեսական զարգացմանը՝ տնտեսության փոփոխվող պահանջների բավարարման անհնարիության պատճառով:

29. «Շիրակի մարզը շարունակում է հանրապետությունում գործազուրկների թվով առաջինը մնալ», Աղբյուր՝ Aysor.am, Հոկտեմբերի 28, 2023: <https://www.aysor.am/am/news/2023/10/28/%D5%B7%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF/2174583>

30. European Training Foundation (ETF). Platform Work in Armenia. 2021. [https://www.etf.europa.eu/sites/default/files/2021-06/platform\\_work\\_armenia\\_1.pdf](https://www.etf.europa.eu/sites/default/files/2021-06/platform_work_armenia_1.pdf).

31. JAMnews. "Equality Day: 52% of Armenian Women Unemployed, Never Intended to Work." JAMnews. Մարտի 9, 2024. <https://jam-news.net/equality-day-52-of-armenian-women-unemployed-never-intended-to-work/>.

32. European Training Foundation (ETF). Platform Work in Armenia. 2021. [https://www.etf.europa.eu/sites/default/files/2021-06/platform\\_work\\_armenia\\_1.pdf](https://www.etf.europa.eu/sites/default/files/2021-06/platform_work_armenia_1.pdf).

Այս խնդիրները ընդգծում են, որ կրթական և տնտեսական քաղաքականությունները պետք է փոխկապակցված լինեն՝ համաչափ զարգացման և աշխատաշուկայում խոցելի խմբերի՝ կանանց և երիտասարդների, հնարավորությունների ընդլայնման համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ինչպես կրթական համակարգի բարելավմանը, այնպես էլ տնտեսական հնարավորությունների ստեղծմանը, որպեսզի նվազեցվի գործազրկության մակարդակը և խթանվի ներառական զարգացումը:

**(4).** Հասարակության տարբեր շերտերում տևային աշխատանքի վերաբերյալ ձևավորվել են երկու հիմնական ընկալումներ:

### **Վարձատրվող տևային աշխատանք.**

Առաջին ընկալումը վերաբերվում է այն անձանց, ովքեր վարձատրվող աշխատանք են իրականացնում մեկ այլ անձի տանը, օրինակ՝ դայակներ, վարորդներ կամ խոհարարներ: Այս անձինք սովորաբար աշխատում են պայմանագրերով, իսկ նրանց աշխատանքը պաշտոնապես դիտարկվում է որպես վճարվող ծառայություն: Պայմանագիրը նրանց որոշակի աշխատանքային իրավունքներ և սոցիալական երաշխիքներ է տալիս: Սակայն, չնայած պայմանագրային կարգավիճակին, այս խումբը հաճախ բախվում է ցածր վարձատրության, երկար աշխատաժամանակի, հանգստի բացակայության և սոցիալական ու առողջապահական ապահովության պակասի խնդիրներին, հատկապես այն դեպքերում, երբ աշխատանքը իրականացվում է առանց պաշտոնական պայմանագրերի:

### **Չվճարվող տևային աշխատանք.**

Երկրորդ ընկալումը վերաբերում է այն կանանց, որոնք զբաղվում են իրենց տան կենցաղային գործերով, ինչպիսիք են մաքրությունը, սննդի պատրաստումը և ընտանիքի խնամքը: Այս աշխատանքը ոչ մի դեպքում չի վարձատրվում, ինչն առաջացնում է սոցիալական և աշխատանքային անհավասարություն:

Սա հատկապես կարևոր է, եթե հաշվի առնենք վերջին տարիների հետազոտությունները, որոնք ցույց են տալիս, որ Հայաստանում աշխատանքային պայմանագրերի կնքման մակարդակը բավականին ցածր է: 2021 թվականի տվյալներով՝ **վարձատրվող աշխատողների 22.1%-ը չունեն աշխատանքային պայմանագիր**<sup>33</sup>: Այս երևույթն առավել տարածված է շինարարության, գյուղատնտեսության, հյուրանոցային, ռեստորանային, հանրային սննդի, ինչպես նաև մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտներում: Մասնավորապես, երիտասարդներն ու տարեցներն են առավել հաճախ աշխատում առանց պայմանագրի, ինչը նրանց դարձնում է խոցելի խտրականության և չվարձատրվող աշխատանքի նկատմամբ:

Հետազոտությունների համաձայն՝ գործատուները հաճախ հրաժարվում են պայմանագիր կնքել՝ հարկերից խուսափելու նպատակով, ինչը լուրջ խոչընդոտ է աշխատողների իրավունքների պաշտպանության համար: Այս խնդիրը հատկապես ակնհայտ է փորձաշրջանի ընթացքում, **երբ փորձաշրջան անցնողների 62.5%-ի հետ պայմանագիր չի կնքվում**<sup>34</sup>: Առանց պաշտոնական պայմանագրի աշխատողները զրկված են աշխատանքային պաշտպանության և իրենց իրավունքների վերականգնման հնարավորություններից, ինչը նրանց առավել խոցելի է դարձնում շահագործման նկատմամբ:

33. «Աշխատանքային պայմանագրերին առնչվող խնդիրները և դրանց բարելավման ուղիները Հայաստանում»: Պրիզմա հետազոտական կազմակերպություն, դեկտեմբեր 2021, էջ 8:

34. Նույն տեղում:

Տնաշխատների իրավունքների խախտումները հատկապես ընդգծված են մի շարք հիմնարար խնդիրներով: Առաջինը պայմանագրերի բացակայությունն է, ինչը խանգարում է աշխատողներին օգտվել սոցիալական երաշխիքներից, ինչպիսիք են արձակուրդները, վերջնահաշվարկը և առողջապահական ծառայությունները: Հասարակական կարծրատիպերը, որոնք վերաբերում են մաքրություն իրականացնող աշխատողներին, ավելի են խորացնում այս խնդիրները՝ նվաստացնելով նրանց արժանապատվությունը և բացասաբար ազդելով հոգեկան բարեկեցության վրա: Հատկապես ծանր են դեպքերը, երբ աշխատողների ընտանիքի անդամները, մասնավորապես երեխաները, ենթարկվում են բուլինգի՝ իրենց ծնողների աշխատանքի պատճառով:

Երկրորդ և հիմնական խնդիրը սոցիալական ապահովության բացակայությունն է: Աշխատողները, ովքեր աշխատում են առանց աշխատանքային պայմանագրերի, գրկված են ոչ միայն արձակուրդային իրավունքներից, այլև կենսաթոշակային համակարգից օգտվելու հնարավորությունից: Սա նրանց դարձնում է խոցելի, հատկապես աշխատունակության կորուստի կամ տարիքային սահմանափակումների պայմաններում:

Վարձատրության հարցը ևս լուրջ խնդիր է: Տնաշխատները հաճախ չեն ստանում համարժեք վարձատրություն իրենց կատարած աշխատանքի համար: Շատ դեպքերում, նրանց աշխատավարձը նվազեցվում է կամ ամբողջությամբ չի վճարվում չնայած նախապես համաձայնեցված պայմաններին, ինչը հաճախ հանգեցնում է վեճերի գործատուների հետ: Իրավունքների խախտումը դրսևորվում է հատկապես այն դեպքերում, երբ գործատուները չեն ապահովում արդար վարձատրություն կամ խախտում են աշխատանքային պայմանները:

Չնայած տնաշխատների մեծ մասը աշխատում է անհատների համար, կան կազմակերպություններ, որոնք տրամադրում են մաքրման ծառայություններ կամ կազմակերպում դասկների պատրաստման դասընթացներ: Այս կազմակերպությունները որոշ չափով խթանում են գործատուների վստահությունը, սակայն այստեղ նույնպես խնդիրներ են առաջանում: Գործատուները հաճախ վստահ չեն, թե աշխատողն արդյոք գրանցված է և արժանի վարձատրություն է ստանում:

Արդյունքում նույնիսկ այս միջնորդավորված համակարգերը լիարժեքորեն չեն երաշխավորում աշխատողների իրավունքների պաշտպանությունը: Ուստի անհրաժեշտ է բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը և պարտադրել գործատուներին կնքել աշխատանքային պայմանագրեր՝ ապահովելով տնային աշխատողների իրավունքների լիարժեք պաշտպանությունը:

**(5).** Միայնակ ծնողները Հայաստանում բախվում են մի շարք մարտահրավերների, ներառյալ ֆինանսական անապահովությունը, հասարակական կարծրատիպերը և հոգեբանական ճնշումները: Այս խնդիրները զգալիորեն բարդացնում են թե՛ ծնողների, թե՛ երեխաների կյանքը՝ նպաստելով սոցիալական մեկուսացմանը և անձնային զարգացման խոչընդոտներին:

**Իրավական բացեր.** Միայնակ ծնող հասկացության բացակայությունը Հայաստանի օրենսդրության մեջ ստեղծում է մի շարք խնդիրներ: 2014 թվականին ուժի մեջ մտած «Պետական նպաստների մասին» օրենքը չի սահմանում «միայնակ մայր/հայր» կամ «միայնակ ծնող» եզրույթը, ինչը խոչընդոտում է այս խմբի համար լրացուցիչ աջակցության տրամադ-

րումը:<sup>35</sup> Մասնավորապես, ՀՀ «Պետական նպաստների մասին» օրենքը (ՀՕ-154-Ն, 2014 թ.) չի ներառում միայնակ ծնողների իրավունքների պաշտպանության և աջակցության հստակ մեխանիզմներ:

Ի տարբերություն, օրինակ, Եվրոպական Միության երկրների, որտեղ միայնակ ծնողները օգտվում են սոցիալական աջակցության որոշակի ծրագրերից, Հայաստանում դեռևս չկա նման հստակ քաղաքականություն:<sup>36</sup> Սա հատկապես ընդգծվում է 1995 թվականին ընդունված, սակայն 1997 թվականին ուժը կորցրած կառավարության N 396 որոշման համատեքստում, որը ժամանակին կարգավորում էր միայնակ մայրերին նպաստների տրամադրման ընթացակարգը, սակայն ներկայումս չի գործում: Մասնակիցները նշել են, որ այս օրենսդրական բացը նաև հանգեցնում է հնարավոր չարաշահումների: Մասնավորապես, ինչպես նշում են մասնակիցները, նպաստների տրամադրման գործընթացը կարող է շահարկվել որոշ դեպքերում, երբ ամուսնացած կամ քաղաքացիական ամուսնության մեջ գտնվող կանայք փորձում են օգտվել միայնակ ծնողների համար նախատեսված աջակցությունից: Օրինակ, ներկայումս միայնակ ծնողներին հատկացվող նպաստները սահմանափակվում են ընդհանուր աղքատության հաղթահարմանն ուղղված օգնությամբ և չեն ներառում առանձին սոցիալական աջակցության ծրագրեր, որոնք հատուկ կվերաբերեին միայնակ ծնողների կարիքներին:<sup>37</sup>

**Սոցիալական կարծրատիպեր եւ հոգեբանական աջակցություն.** Հասարակության մեջ միայնակ ծնողների նկատմամբ ամկա կարծրատիպերը խոչընդոտում են նրանց ինքնագարգացմանը և սոցիալական ինտեգրմանը: Միայնակ ծնողները հատկապես գյուղական համայնքներում հաճախ ենթարկվում են պիտակավորման: Այս մոտեցումները խորացնում են սոցիալական մեկուսացումը, որի հետևանքով միայնակ ծնողները, նախքան միայնակ ծնող դառնալը, շատ հաճախ հրաժարվում են ամուսնալուծությունից՝ վախենալով հասարակական ճնշումներից:

2021 թվականին հրապարակված հետազոտության տվյալներով՝ զուգընկերոջ կողմից ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց 43.3%-ը լռում է բռնության մասին, իսկ սեռական բռնության ենթարկված կանանց 48%-ը գերադասում է չխոսել այդ մասին<sup>38</sup>: Ֆիզիկական բռնության ենթարկված կանանցից միայն 12%-ն է դիմել օգնության որևէ պատասխանատու կառույցի՝ շատերը դիմում են միայն այն ժամանակ, երբ այլևս չեն կարողանում հանդուրժել բռնությունը կամ, երբ բռնության արդյունքում ստանում են ծանր վնասվածքներ:<sup>39</sup>

Այս իրավիճակը հանգեցնում է նրան, որ շատ կանայք ընտրում են մնալ բռնարար ամուսնությունների մեջ՝ խուսափելով հասարակական արձագանքից: Սոցիալական նորմերը և շրջապատի մարդկանց քննադատական վերաբերմունքը հաճախ ստիպում են կանանց դիմակայել ընտանեկան բռնությանը և չդիմել ամուսնալուծության, անգամ եթե դա միակ լուծումն է նրանց և նրանց երեխաների բարեկեցությունը ապահովելու համար: Բռնության

35. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով. «Պետական նպաստների մասին» (ՀՕ-154-Ն). Հաստատվել է 2014 թ. հունվարի 1-ին: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=94822> .  
36. European Commission. "Single Parenthood and Social Protection: A Comparative Study in European Countries." European Commission Report, 2017: 22-30. <https://ec.europa.eu/social/main.jsp?catId=22&langId=en>.  
37. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե. «Հայաստանի սոցիալական վիճակագրություն 2023»: Երևան: Վիճակագրական կոմիտե, 2023 թ. <https://armstat.am>.  
38. «Ապտակից՝ մինչև սպանություն. ի՞նչ է ցույց տալիս հետազոտությունը». Havasar-Infohub. 2021: Հասանելի է՝ <https://havasari-infohub.am/%D5%A1%D5%BA%D5%BF%D5%A1%D5%AF%D5%AB%D6%81%D5%9D-%D5%B4%D5%AB%D5%B6%D5%B9%D6%87-%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%AB%D5%9E%D5%B6%D5%B9/>.  
39. Նույն տեղում:

ենթարկված կանանց 76.5%-ը շարունակում է ապրել բռնարարի հետ՝ երբևէ չլքելով տունը, իսկ տանից հեռացած կանանց 63%-ը վերադառնում է ամուսնու տուն:<sup>40</sup> Այս վիճակագրությունը ցույց է տալիս, թե որքան բարդ է կանանց համար դիմել ամուսնալուծության, երբ տնտեսական կախվածությունը և սոցիալական վախերը խանգարում են նրանց պաշտպանել իրենց իրավունքները և ապահովել անվտանգ կյանք իրենց և երեխաների համար:

**Ֆինանսական և կրթական հնարավորություններ.** Կարևոր խնդիր է նաև միայնակ ծնողների կրթական և ինքնազարգացման հնարավորությունը: Ֆինանսական դժվարությունները խոչընդոտում են միայնակ ծնողներին ձեռք բերել նոր մասնագիտություններ կամ մասնակցել կրթական ծրագրերի: Հայաստանի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալներով, միայնակ ծնողների համար հատուկ ծրագրեր նախատեսված չեն: Միայնակ ծնողները հիմնականում օգտվում են ընտանեկան նպաստից, որը տրամադրվում է միայն շատ աղքատ ընտանիքներին՝ անկախ միայնակ ծնող լինելու հանգամանքից:

Այս խնդիրը հատկապես սուր է Հայաստանում, որտեղ բազմաթիվ կրթական ծրագրեր հասանելի են միայն վճարովի հիմունքներով: Չկոնֆերանսի մասնակիցները նշել են, որ կրթական ծրագրերի մատչելիությունը հաճախ սահմանափակվում է բարձր վարձավճարներով, իսկ միջազգային կրթական ծրագրերը հաճախ ունեն տարիքային սահմանափակումներ:

**(6).** Համաձայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Էլեկտրոնային տեղեկատվական բազայի տվյալների՝ 2022թ. դրությամբ Հայաստանում հաշվառված է 193 086 հաշմանդամություն ունեցող անձ, որից 9327-ը՝ անչափահաս են<sup>41</sup>: Բոլոր հանրակրթական դպրոցները Հայաստանում համապարփակ են, ինչը նշանակում է, որ հատուկ կրթական կարիքներով երեխան կարող է ցանկացած դպրոց ընդունվել և կրթական ծրագիր յուրացնել<sup>42</sup>: Սակայն կա մտավախություն, որ մանկավարժներն ու ծնողները պատրաստ չեն ներառական կրթությանը. առաջինները չունեն փորձ՝ բազմամակարդակ ուսուցում կազմակերպելու հարցում, իսկ երկրորդները՝ գիտելիքներ՝ երեխաներին դպրոցին պատրաստելու համար:

**Հաշմանդամություն և ներառականություն.** Հայաստանի հասարակությունում ներառականությունը հաճախ ընկալվում է որպես բացառապես հաշմանդամություն ունեցող անձանց կամ երեխաների խնդիր, այնինչ ներառականությունը համընդհանուր կոնցեպտ է, որի շրջանակներից միայն մի մասն է վերաբերում հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության ապահովմանը: «Ներառական կրթությունը սահմանվում է որպես դասավանդման մոտեցում, որի դեպքում բոլոր աշակերտները, անկախ իրենց հատուկ կարիքներից կամ խնդիրներից, տեղակայվում են իրենց տարիքին համապատասխան ընդհանուր կրթական դասարաններում իրենց բնակության վայրի դպրոցներում՝ ստանալու համապատասխան հրահանգներ, միջամտություններ և աջակցություն, որոնք թույլ կտան նրանց հաջողություն ունենալ հիմնական ծրագրում»<sup>43</sup>: Սա ենթադրում է բոլոր երեխաներին նույն դասարաններում և դպրոցներում տեղավորելը և տարբեր հարթությունների աշակերտների առանձնահատկությունները ճանաչելը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն շեշտում է, որ ներառական կրթության հաջողության բանալին միջազգայնորեն ճանաչված սկզբունքների կիրառումն է և հատուկ կրթական կարիքներ ունեցող երե-

40. Նույն տեղում:

41. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց վիճակագրական տվյալներ, 2022թ.

42. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն. Ներառական կրթության զարգացումը ՀՀ հանրակրթական դպրոցներում. 2021. <https://escs.am>

43. UNESCO, Inclusion and Education: All Means All, 2020, <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000373718>.

խաների ինտեգրումը ընդհանուր դասարաններում առանց որևէ խտրականության: Ներառականությունը գլոբալ կոնցեպտ է, որը ներառում է բոլոր խմբերը՝ անկախ ֆիզիկական, սոցիալական կամ մշակութային վիճակից<sup>44</sup>:

**Կրթական համակարգի մարտահրավերները.** Կրթական համակարգի մարտահրավերները կապված են ներառականության ընկալման, կարծրատիպերի, հաղորդակցության խնդիրների և խտրականության հետ: «Ներառական» հասկացությունը Հայաստանում լայն շրջանառության մեջ դրվեց ներառական կրթության մասին օրենքի ընդունումից հետո: Օրենքը ենթադրում էր հանրակրթական հաստատություններում համապատասխան պայմանների ստեղծում, որը թույլ կտար կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին սովորել իրենց հասակակիցների հետ: 2010 թվականին Հայաստանը վավերացրեց ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան: Չնայած դրան, հասարակության մեջ դեռևս կան հակասական կարծիքներ ներառականության վերաբերյալ: Համաձայն Չկոնֆերանսին մասնակցած տեղական ուսուցիչների կարծիքների՝ որոշ դեպքերում հատուկ դպրոցներն ավելի արդյունավետ են հաշմանդամություն ունեցող երեխաների համար, ովքեր ունեն ֆունկցիոնալության խորը և ծանր սահմանափակումներ: Այս մոտեցումը առաջ է բերում քննարկումներ այն մասին, թե արդյո՞ք բոլոր երեխաները կարող են հաջողությամբ սովորել հանրակրթական դպրոցներում:

Ներառականության և հաշմանդամության ընկալումը նույնպես խնդիր է: Հաշմանդամությունը հաճախ ընկալվում է որպես ֆիզիկական, մտավոր կամ զգայական սահմանափակում, մինչդեռ ներառական կրթությունը նպատակ ունի ապահովել բոլոր աշակերտների հավասար կրթական հնարավորությունները՝ ներառյալ հաշմանդամություն ունեցողներին: Հասարակության մեջ կարևոր է հստակեցնել այս հասկացությունների տարբերությունը:

Կարծրատիպերն ու հաղորդակցման սխալները ևս լուրջ մարտահրավեր են: Հասարակության լայն շրջանակներում դեռևս տարածված են կարծրատիպեր, որ հաշմանդամություն ունեցող անձինք պահանջում են սփոփանք կամ խղճահարություն, ինչը խանգարում է ճիշտ հաղորդակցմանը և նպաստում սոցիալական մեկուսացմանը: Այս խնդիրը խորանում է, երբ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները, ուսուցիչները և նրանց հասակակիցները ճիշտ չեն պատկերացնում, թե ինչպես պետք է շփվել:

Վերջապես, խտրականության խնդիրը շարունակում է ազդել ինչպես կրթական համակարգում, այնպես էլ այլ ոլորտներում՝ սկսած դպրոցներից մինչև աշխատավայրեր: Երեխաները հաճախ սոցիալապես մեկուսացվում են դպրոցում, և նրանց հնարավորություն չի տրվում լիարժեք մասնակցել ուսումնական գործընթացին, իսկ խտրականությունը շարունակում է խորանալ նաև պետական կառույցներում:

**(7).** 2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի լայնամասշտաբ ագրեսիայի հետևանքով ԼՂ-ի գրեթե ողջ բնակչությունը բռնի տեղահանվեց՝ մոտ 10 ամիս շրջափակման մեջ մնալուց հետո:<sup>45</sup> Այս տեղահանությունը զգալի ազդեցություն ունեցավ ինչպես տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերի, այնպես էլ մարդկանց կյանքի որակի վրա: Տեղահանված անձանց առջև կանգնած մարտահրավերները ներառում են ոչ միայն ֆիզիկական և նյութական վնասներ, այլև խորքային հոգեբանական և սոցիալական հետևանքներ:

44. United Nations, Disability Inclusion Strategy Report, 2022, <https://www.un.org/development/desa/disabilities>.

45. Freedom House Special Report 2024. *Why are There No Armenians in Nagorno-Karabakh?*, published on 10.07.2024

**Կորստի ցավ և պատերազմի հիշողություն.** հոգեբանական կողմեր. Տեղահանված կանանց մի մասը դեռևս ապագայում պահում է պատերազմի և շրջափակման հիշողությունները, որոնք շարունակում են մնալ թարմ, իսկ նրանց զգալի մասը դժվարությամբ է ընդունում ստեղծված նոր իրականությունը: Զրույցների ընթացքում, ի թիվս այլ թեմաների, իրենց ներկայացվել է նաև վշտի հաղթահարման՝ Զյուբլեր-Ռոսսի տեսությունը<sup>46</sup> և առաջարկվել ընտրել իրենց համապատասխանող փուլը: Քսանից տասներեքը նշել են, որ իրենք դեռ «չեն ընդունում այս նոր իրականությունը»: Վեցի կարծիքով իրենք գտնվում են երկրորդ՝ բարկության փուլում, և միայն մեկն է իրեն տեղակայել հնգամակարդակ մոդելի երրորդ՝ սակարկման փուլում: Ստացվում է, որ տեղահանումից անգամ մեկ տարի անց վշտի ու կորստի զգացումը չի հաղթահարվել:

Մի շարք կանայք իրենց վերականգնման գործընթացում սկսել են օգտվել թվային գործիքներից, ինչպիսիք են Google Earth-ը կամ սոցիալական մեդիայի պլատֆորմները՝ վերականգնելով իրենց նախկին կյանքի հուշերը: Սակայն նրանցից ոմանք խուսափում են նման քայլերից՝ վախենալով, որ դա կտրի իրենց վիշտը: Ավելին, շատերն էլ իրենց մեջ կրում են պատերազմի վերսկսման վախը, ինչն էլ ավելի է խորացնում նրանց հուզական ծանրաբեռնվածությունը: Որոշները նշել են, որ իրենց մոտ դեռևս առկա է պատերազմի վերսկսման «վախ», «տագնապ»: Հետաքրքիր է, որ զրուցակից բոլոր կանայք գիտակցում են, որ պատերազմներ ու բռնի տեղահանություն վերապրելուց հետո իրենք հոգեբանական կազդուրման կարիք ունեն, սակայն «հոգեբանի ծառայության դիմելն ինքնին կարծրատիպային է. մյուս կողմից, լավ հոգեբանի ծառայությունը թանկ է»:<sup>47</sup>

**Կանխակալ վերաբերմունք և սոցիալական անհավասարություններ.** Տեղահանված կանայք հաճախ բախվում են հասարակական կարծրատիպերի և խտրականության: Արցախի բարբառով խոսող կանանց հաճախ հանդիպում են տարօրինակ հայացքներ կամ հեգնանք հասարակական վայրերում: Ոմանք նշում են, որ արցախցիների հանդեպ հայաստանյան հանրության վերաբերմունքը խորը կանխակալ է, և որ պետական մակարդակով չի տարվում բավարար աշխատանք՝ այս պառակտումը վերացնելու համար: Ավելին, կանայք կարծում են, որ պետությունը չի աջակցում հասարակական ընկալումների փոփոխությանը, ինչը խորացնում է նրանց սոցիալական մեկուսացումը:

Կանխակալ վերաբերմունքի առկայություն. Այս վերլուծության շրջանակում հարցազրույցների մասնակցած քսան տեղահանված արցախցի կանանց մեծամասնությունը գտնում է, որ Հայաստանում իրենց հանդեպ վերաբերմունքը հաճախ կանխակալ և կարծրատիպային է: Նրանցից ոմանք օգտագործում են «ատելության խոսք» և «խտրականություն» հասկացությունները՝ հղում անելով իրենց արցախցի լինելու հանգամանքի վրա: Նրանք նշում են, որ հանրային վայրերում, երբ խոսում են արցախյան բարբառով, հաճախ բախվում են ուշադիր կամ հեգնական հայացքների: Ավելին, հարցվածներից մի մասը (քսան հոգուց չորսը) կարծում է, որ պետական մակարդակով նման բաժանարար միտումների նկատմամբ անտեսում է դրսևորվում: Նրանցից մեկը նույնիսկ կարծիք է հայտնում, որ պետությունը խրախուսում է արցախցի-հայաստանցի խոսույթի առկայությունը՝ որպես օրինակ մատնանշելով Հանրային հեռուստաընկերության հետ կապված քրեական գործը, որի հիմքում եղել է արցախյան բարբառով հեռախոսազրույց: Նա նշում է, որ այդ ռեպորտաժից հետո դադարել է հետևել Հանրային հեռուստատեսությանը<sup>48</sup>, քանի որ վիրավորվել է՝ հա-

46. «Կորստի հիևգ փուլերի տեսությունը, որը ներառում է մերժում, բարկություն, բանակցություն, դեպրեսիա և ընդունում», Holland, Jason M. "Elisabeth Kübler-Ross." ResearchGate. February 2024. <https://doi.org/10.13140/RG.2.1.3863.2401>.  
47. Ձևակերպումը ուղիղ մեջբերում է զրուցակցի հիմնավորումից:  
48. Ռ/Կ Ազատություն Նայաստան. "Երկու տղամարդու Արցախի բարբառով զրույցը՝ քրեական գործի հիմք." \*Ազատություն\*, Հունիսի 6,

մարելով, որ արցախցիներին փորձում են «օգտագործել» ներքաղաքական օրակարգերում: Մինչդեռ, նրա կարծիքով, տեղահանվածների առաջնահերթ խնդիրը շարունակում է մնալ կենցաղային խնդիրների լուծումը:

**Սոցիալ-տնտեսական իրավիճակ.** Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանայք բախվել են սոցիալ-տնտեսական լուրջ դժվարությունների, հատկապես միջին տարիքի (45+) խմբի ներկայացուցիչները, որոնք ԼՂ-ում ունեին կայուն աշխատանք և եկամուտ: Ներկայումս, նույնիսկ վերապատրաստման դասընթացներից հետո աշխատանք գտնելը նրանց համար չափազանց դժվար է:

Չբաղվածության ապահովման խնդիրը քննարկվել է այս տարիքային խմբի 8 տեղահանված կանանց հետ: Բոլորն ընդգծել են, որ գործատուների հիմնական առարկությունները կապված են իրենց տարիքային խմբի և անգլերենի չիմացության հետ: Նրանցից երկուսը նշել են, որ, թեև ԼՂ-ում աշխատում էին պետական համակարգում և զբաղվում էին մասնագիտական գործունեությամբ, ներկայումս սոցիալ-տնտեսական անորոշության պատճառով ստիպված են անցնել ցածր վարձատրվող աշխատանքների սպասարկման ոլորտում: Այս աշխատանքներում նրանք հաճախ բախվում են խտրական և անպատշաճ վերաբերմունքի: Որոշ դեպքերում, ըստ նրանց, նույնիսկ ստիպված են լինում «խնդրել» իրենց օրինականորեն հասանելի «շաբաթական մեկ հանգստյան օրը»:

**Ինտեգրման դժվարություններ.** Պատերազմի հետևանքով բռնի տեղահանվածները միաժամանակ փորձում են լուծել սոցիալ-տնտեսական խնդիրները և հարմարվել նոր միջավայրին, ինչը բարդ գործընթաց է: Օրինակ՝ 4 երեխաների և ամուսնու հետ մեկ սենյականոց բնակարանում ապրող կին պատմում է, որ բռնի տեղահանությունից ամիսներ անց շատ հուզվել է, երբ ուսուցիչը հարցրել է իր երեխայի անձնական տարածքի բացակայության մասին: Նախկինում իրենց ընտանիքը՝ վեց հոգի, ապրում էր ընդարձակ տան մեջ:

Տարեցներն առանձնանում են որպես ավելի խոցելի խումբ: Սոցիալական աշխատողներն ու հոգեբանները նշում են, որ թոշակառուների համար նոր պայմաններում ինտեգրվելը հատկապես դժվար է: Խղճահարության դրսևորումները հաճախ հոգեբանորեն ճնշող ազդեցություն են ունենում նրանց վրա:

Բացի այդ, կան նաև համակարգային խնդիրներ: Կանայք մատնանշում են պետական համակարգի թերությունները, աշխատակիցների չիրազեկվածությունը և տրամադրվող տեղեկատվության հակասությունները: «Քաղաքացի-փախստական» կարգավիճակի անորոշությունը նույնպես լուրջ անհանգստություն է առաջացնում: Տարիներ շարունակ ԼՂ-ում ծնվածները ներգրավված են եղել ՀՀ հասարակական կյանքում, և նրանց մտահոգում է փախստականի կարգավիճակի ժամանակավոր բնույթը:<sup>49</sup>

Կարիքների գնահատումը հաճախ խնդիր է առաջացնում: Երբեմն այն կատարվում է «հայաստանյան տեսանկյունից», մինչդեռ կարևոր է ներգրավել տեղահանվածներին քաղաքականության մշակման գործընթացում՝ լսելով նրանց իրական կարիքներն ու կարծիքները: Ֆինանսական աջակցություններից ավելի, նրանք կցանկանային ստանալ կայունության երաշխիքներ:<sup>50</sup>

2024. <https://www.azatutyun.am/a/erku-tghamardu-artsakhi-barbarov-zruytsy-qreakan-gortsi-himq/32981739.html>.

49. Օրինակներից մեկը վերաբերում էր ֆինանսական աջակցության դիմումները լրացնելու կարգին, որի մասին Միասնական սոցիալական ծառայության թեժ գծի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների պարզաբանումները իրարամերժ էին:

50. ՀՀ Կառավարության որոշում N1864-Ն, «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին», 26.10.2023, [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/GV21-7B6A-EB77-37C1/1864.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV21-7B6A-EB77-37C1/1864.pdf).

**Ընդունող կողմի մտահոգությունները.** Ընդունող կողմի մոտ նույնպես առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում են համակարգային լուծումներ: ԼՂ-ից տեղահանվածների աջակցման գործընթացում ներգրավված ոլորտային մասնագետները հաճախ նշում են իրենց մասնագիտական գերլարվածության մասին:

Հայաստանում սոցիալական աշխատողները և հոգեբանները խոստովանել են, որ իրենք նույնպես հայտնվել են սթրեսային վիճակում, ինչը խաթարել է իրենց մասնագիտական արդյունավետությունը: Օրինակ՝ Մասիսում սոցիալական աշխատողները նշում են, որ անգամ ամիսներ անց «մասնագիտական այրման» վիճակ: Նման խնդիրներ կան նաև այն մասնագետների շրջանում, ովքեր անձամբ ովքեր անձամբ են վերապրել տրավմատիկ փորձառություններ՝ ընտանիքում պատերազմի զոհ ունենալու հետևանքով:

Մասնագիտական վերապատրաստման ծրագրերը չեն կարողանում բավարարել առկա պահանջները: Գյումրուց մի հոգեբան ընդգծել է, որ վերապատրաստման ծրագրերը ոչ միայն քանակապես, այլև որակապես բավարար չեն, ինչն ավելացնում է մասնագետների ծանրաբեռնվածությունը:

**Մշակութային և վարքագծային խնդիրներ.** Մասնագետներից մեկը պատմում է մի դեպք, երբ շահառուն ստիպված է եղել անջատել հեռախոսը, քանի որ մարդիկ, չնայած իրենց սրտացավությանը, «չէին թողնում նրան սզալ»: Այս վարքագծերը, ըստ մասնագետների, պետական նախաձեռնողականության բացակայության արդյունք են:

Ընդհանուր առմամբ, մասնագետները նկատում են, որ պետությունը 2020թ. և 2023թ. պատերազմների ընթացքում բավարար նախաձեռնողականություն չի ցուցաբերել: Սա հանգեցրել է «քաղաքացիների անգրագետ փոխօգնության ինստիտուտի» ձևավորմանը, որտեղ հասարակության անհատական ջանքերը հաճախ չեն համապատասխանում իրական կարիքներին և կարող են վնասել շահառուների զգացմունքային և հոգեբանական վիճակին:

**(8).** Արցախյան վերջին հակամարտությունը և դրան հետևած տեղահանությունը Հայաստանը կանգնեցրին լրջագույն մարտահրավերների առաջ: Հազարավոր արցախցիներ ստիպված եղան լքել իրենց տները և ապաստան գտնել Հայաստանում: Տեղահանվածների ինտեգրման գործընթացը չափազանց բարդ է և ներառում է մի շարք խոչընդոտներ՝ սկսած սոցիալ-տնտեսական դժվարություններից մինչև հոգեբանական և մշակութային խնդիրներ:

**Սոցիալ-տնտեսական խոչընդոտներ.** Տեղահանվածների ինտեգրումն անմիջականորեն կախված է պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններից և ընդունող հասարակության կառուցվածքից: Հայաստանի վերջին տարիների տնտեսական ճգնաժամերը և սոցիալական խնդիրները էապես բարդացնում են մեծաթիվ տեղահանվածների ինտեգրումը: Թեև տրամադրված կարճաժամկետ ֆինանսական օգնությունն ու կացարանների ապահովման ծրագրերը մասամբ մեղմում են ճգնաժամի հետևանքները, դրանք բավարար չեն երկարաժամկետ կայունության ապահովման համար:

Տեղահանվածների աշխատանքի հնարավորությունների և մասնագիտական հմտությունների բացակայությունը դժվարացնում է նրանց երկարաժամկետ տնտեսական ինտեգրումը: Տնտեսական ինտեգրման հիմնական խոչընդոտներից են նաև արցախցիների ունեցվածքի կորուստը և դրա վերականգնման հետ կապված դժվարությունները: Բացի կարճաժամկետ ֆինանսական աջակցությունից, կարևոր է կազմակերպել աշխատանքային

հմտությունների զարգացման ծրագրեր՝ նրանց հարմարեցնելու ՀՀ աշխատաշուկայի պահանջներին: Սակայն, առկա ծրագրերը հաճախ չեն ապահովում բավարար աջակցություն՝ տեղահանվածների սոցիալական և տնտեսական կայունությունն ամրապնդելու համար:

Տեղահանվածների ինտեգրումը պահանջում է համալիր մոտեցում, որը կներառի ոչ միայն տնտեսական աջակցություն, այլև նոր հմտությունների և կրթական հնարավորությունների ստեղծում ուղղված նրանց երկարաժամկետ կայունության ապահովմանը:

**Հոգեբանական և մշակութային խնդիրներ.** Հոգեբանական և մշակութային խնդիրները նույնպես մեծ ազդեցություն են ունենում ինտեգրման գործընթացի վրա: Տեղահանվածները կրում են պատերազմի հետևանքների ծանր բեռը, որն արտահայտվում է դեպրեսիայի, սթրեսի և մեկուսացման ձևով: Տրավմայի հաղթահարումը հաճախ ավելի է բարդանում, երբ սոցիալական աջակցության կամ հոգեբանական ծառայություններից օգտվելու փոխարեն նրանք գերադասում են այլընտրանքային մեթոդներ:

Մշակութային առումով, տեղահանվածների և ընդունող հասարակության միջև լեզվական և մշակութային տարբերությունները խոչընդոտում են շփումներին: Արցախյան բարբառը հաճախ դիտվում է որպես խոչընդոտ սոցիալական հարաբերություններում, ինչը ոչ միայն բարդացնում է առօրյա հաղորդակցությունը, այլև խորացնում է արցախցիների մեկուսացումը նոր համայնքներում: Մշակութային այս տարբերությունները հաճախ էլ ավելի են ուժեղացնում մեկուսացվածության զգացումը՝ դժվարացնելով նրանց ինտեգրման գործընթացը:

**Տեղահանվածների ներքին տարբերությունները.** Տեղահանված արցախցիների շրջանում առկա ներքին բաժանումներն էլ ավելի են դժվարացնում միասնական ինտեգրման գործընթացը: Այս բաժանումները հաճախ պայմանավորված են նախկին բնակավայրերով, սոցիալ-տնտեսական դիրքով և տարբեր փորձառություններով: Որոշ խմբեր, որոնք արդեն անցել են ինտեգրման գործընթաց Արցախում, այժմ ստիպված են նորից անցնել նմանատիպ մարտահրավերների միջով՝ հարմարվելով Հայաստանի նոր միջավայրին: Այս ներքին տարանջատումները խոչընդոտում են սոցիալական համախմբվածության ձևավորմանը և միասնականությամբ նոր համայնքում ինտեգրվելու հնարավորություններին:

**(9).** Հայաստանի Հանրապետությունում ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչները հաճախ բախվում են ինչպես հասարակական, այնպես էլ ինստիտուցիոնալ խտրականության: Այս խումբը ամերեսվում է բազմաթիվ խնդիրների՝ սկսած ֆիզիկական և հոգեբանական բռնություններից մինչև ատելության հիմքով հանցագործություններ և իրավական պաշտպանության բացակայություն: Նրանց հանդեպ բացասական վերաբերմունքը խորապես արմատավորված է սոցիալական կարծրատիպերի և ավանդական արժեքների մեջ, ինչը ԼԳԲՏ+ անձանց դարձնում է խիստ խոցելի հասարակության տարբեր շերտերում:

**Խտրականություն, ատելության խոսք և բռնություն.** Վերջին տվյալների համաձայն՝ 2023 թվականին Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները փաստագրել են ատելության հիմքով բռնության 53 դեպք, որոնցից 50-ը վերաբերում են ԼԳԲՏ+ անձանց դեմ ուղղված հանցագործություններին: Այս հանցագործությունների հիմքում հաճախ եղել են նրանց սեռական կողմնորոշումն ու (կամ) գենդերային ինքնությունը:<sup>51</sup> Դեպքերի շրջանակը ներառում է ֆիզիկական բռնություն, սպառնալիքներ և ահաբեկումներ, որոնք նպատակաուղղված են եղել ԼԳԲՏ+ համայնքի անդամներին:

51. OSCE. "Hate Crime Reporting: Armenia, 2022." OSCE. Accessed September 9, 2024. <https://hatecrime.osce.org/armenia?year=2022>.

Այս բռնությունները տարեցտարի աճում են. օրինակ՝ 2019 թվականին արձանագրվել էր ատելության հանցագործությունների 30 դեպք:<sup>52</sup> Աճող թվերը ցույց են տալիս, որ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ խտրականությունը խորապես արմատավորված է և մնում է մշտական խնդիր: Բացի ֆիզիկական բռնությունից, համայնքի անդամները հաճախ բախվում են նաև հոգեբանական ճնշումների, որոնք դրսևորվում են թե՛ ընտանիքի ներսում, թե՛ հասարակական վայրերում:

Ֆիզիկական և հոգեբանական բռնությանը զուգահեռ, ատելության խոսքն էլ ավելի է խորացնում ԼԳԲՏ+ համայնքի նկատմամբ ճնշումները: Այն նկատվում է թե՛ առցանց հարթակներում, թե՛ իրական կյանքում՝ ազդելով անձանց բարեկեցության և կյանքի որակի վրա: Ատելության խոսքը խթանում է խտրականության շարունակականությանը և խախտում է ԼԳԲՏ+ անձանց իրավունքները ինչպես անձնական, այնպես էլ պետական և հասարակական մակարդակներում: Չնայած 2020 թվականին ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններին, որոնք նախատեսում են քրեական պատասխանատվություն ատելության խոսքի համար, այս օրենքի կիրառումն արդյունավետ չէ: Արդյունքում, ատելության խոսքի դեպքերի մեծ մասը մնում է անպատիժ, ինչը խանգարում է հանրային արդարության և համերաշխության հաստատմանը:<sup>53</sup>

Ատելության խոսքը և դրա հիմքով բռնությունները լուրջ խոչընդոտներ են ԼԳԲՏ+ համայնքի անդամների համար՝ նրանց ենթարկելով համակարգված խտրականության և իրավունքի խախտման: Այս իրավիճակը պահանջում է օրենսդրության հետևողական կիրառում, հանրային գիտակցության բարձրացում և ավելի հստակ մեխանիզմներ՝ կանխարգելելու ատելության խոսքի դրսևորումները:

**Պետության պարտավորություններ և իրավական շրջանակ.** ՀՀ Սահմանադրությունը խտրականության արգելքն ամրագրում է մի շարք հիմքերով՝ ներառյալ սեռը, ռասան, ազգային ծագումը, կրոնը և այլ բնութագրեր: Այնուամենայնիվ, Հայաստանում բացակայում է հատուկ օրենք, որը կբացատրեր խտրականության հասկացությունն ու դրա դրսևորումները՝ ներառյալ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը:

խտրականության դրսևորումներ՝ պետական և հասարակական մակարդակներում. ԼԳԲՏ+ համայնքի անդամները պարբերաբար բախվում են խտրականության ինչպես պետական կառույցներում, այնպես էլ մասնավոր հատվածում: 2022 թվականի ԵԱՀԿ գեկույցի համաձայն՝ Հայաստանում ատելության հանցագործությունների մեծամասնությունը կապված է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ:<sup>54</sup>

խտրականությունը հատկապես ընդգծված է պետական կառույցներում՝ ներառյալ ոստիկանությունը, զինված ուժերը և բուժհաստատությունները, որտեղ հաճախ հանդիպում են բռնության, ստորացումների և անհավասար վերաբերմունքի դեպքեր: ԼԳԲՏ+ անձինք հաճախ են բախվում ոստիկանական անտարբերությանը՝ իրենց դեմ կատարված հանցագործությունների առնչությամբ: Օրինակ՝ 2021 թվականին Շուռնուխ գյուղում տեղի ունեցած բռնության դեպքը, որը նպատակաուղղված էր սեռական կողմնորոշման հիմքով անձանց դեմ, մինչ օրս պատշաճ լուծում չի ստացել: Այս իրավիճակը վկայում է իրավապահ մարմինների անտարբերության և նման հանցագործությունների նկատմամբ անարդյունավետ արձագանքի մասին:

52. Նույն տեղում:

53. Republic of Armenia. "Legislation: Questions and Orders.", article 330. <https://www.am.am/arm/legislation/q-o/>.

54. OSCE. "Hate Crime Reporting: Armenia, 2022." OSCE. Accessed September 9, 2024. <https://hatecrime.osce.org/armenia?year=2022>.

Այս խնդիրները ցույց են տալիս, որ խտրականության կանխարգելմանն ուղղված իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմները Հայաստանում բավարար չեն: Պետությունն ունի պարտավորություն՝ ստեղծելու հստակ և ներառական օրենսդրական դաշտ, որը կերպա-խավորի բոլոր անձանց հավասարությունը՝ անկախ սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից:

**Կրթության և հասարակության իրազեկվածության մակարդակը.** Կրթության և իրազեկվածության պակասը զգալիորեն նպաստում է ԼԳԲՏ+ համայնքի նկատմամբ խտրականության խորացմանը: Հայաստանի կրթական համակարգում բացակայում են սեռականության և գենդերային ինքնության վերաբերյալ դասընթացներ, ինչը խոչընդոտում է հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը: Այս բացը նկատվում է ոչ միայն հանրակրթական դպրոցներում, այլև պետական այլ հաստատություններում, որտեղ անհրաժեշտ կրթական ծրագրերի առկայությունը կարող էր խթանել հանդուրժողականության և հավասարության արժեքները:

Այս իրավիճակը խորացնում է հասարակական կարծրատիպերն ու խտրականությունը՝ խանգարելով ԼԳԲՏ+ անձանց իրենց ինքնության բացահայտմանը և նպաստելով նրանց նկատմամբ բացասական վերաբերմունքի դրսևորումներին: Այդ վերաբերմունքը հատկապես զգալի է պետական և մասնավոր հաստատություններում, ինչպիսիք են բժշկական, իրավապահ և զինվորական կառույցները, որտեղ խտրականության դեպքերը հաճախ կառուցվածքային բնույթ են կրում:

# Առաջարկություններ

## (1) Տարեցներ և հասարակություն

Տարեցների զբաղվածության և ինսամքի հետ կապված խնդիրները լուծելու նպատակով առաջարկվում է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- **Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների ընդլայնում.**

ՀՀ բոլոր մարզերում ավելացնել սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններ, կարճաժամկետ հեռանկարում՝ առնվազն բոլոր խոշոր համայնքներում: Կառավարության 2025թ. ծրագրում ներառել երկու այդպիսի նոր կենտրոնի ստեղծում տարբեր համայնքներում:

- **Համագործակցություն և նախաձեռնությունների զարգացում.**

Կառավարության, կրթական կենտրոնների և այս հիմնախնդրով զբաղվող ՀԿ-ների (օրինակ՝ «Առաքելություն Հայաստան») համագործակցությամբ համատեղել ջանքերը և մասնակցային ձևաչափով կազմակերպել տարեցների ներգրավման և ինսամքի ծրագրեր:

- **Մոնիտորինգ և կարիքներին համապատասխանեցում.**

Կազմակերպել մոնիտորինգ համայնքներում և ապահովել ցերեկային կենտրոնների ծրագրերի բովանդակության համապատասխանեցումը համայնքների կարիքներին:

- **Անձնակազմի վերապատրաստում.**

Անցկացնել վերապատրաստումներ ցերեկային կենտրոնների անձնակազմի, այդ թվում՝ սոցիալական աշխատողների համար, բարձրացնելու նրանց կարողությունները և աշխատանքի արդյունավետությունը:

- **Մասնակցության ավելացում.**

Տարեցների մասնակցության մակարդակը բարձրացնելու նպատակով նրանց ներգրավել կարիքների գնահատման գործընթացում՝ ապահովելով կարիքահենք առաջնահերթությունների ճշգրիտ ձևակերպումը: ՀՀ բոլոր մարզերի խոշոր համայնքներում մինչև 2025 թվականը համայնքապետարանների ներքո ստեղծել «Տարեցների խորհուրդներ», որոնք կզբաղվեն տարեցների կարիքների գնահատմամբ, վերոնշյալ

թեմաներով սեմինարների կազմակերպմամբ և համայնքային բյուջեի պլանավորման գործընթացում մասնակցությամբ:

- **Մշակութային տների օգտագործում.**

Համայնքներում գործող մշակույթի տները կիրառել տարեցների իրավագիտակցության բարձրացման նպատակով՝ սեմինարների, տեղեկատվական և մշակութային ծրագրերի կազմակերպման համար: Ապահովել նրանց ծանոթությունը ժամանակակից տեխնոլոգիաներին և դրանց հնարավոր կիրառություններին:

- **Աշխատանքի գնահատում.**

Պետական գերատեսչությունների կողմից տարեվերջյան ամփոփագրով ներկայացնել կատարված աշխատանքները՝ օգտագործելով քանակական և որակական ցուցանիշներ՝ գնահատելու կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականության արդյունավետությունը:

- **Սոցիալական ցանցի հարթակների օգտագործում.**

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծել աշխատանքային հարթակ սոցիալական ցանցերում (LinkedIn, Facebook, Instagram), որտեղ կկենտրոնացվեն տարբեր փորձառություն ունեցող աշխատանք փնտրող տարեց անձանց ռեզյումեները: Ակտիվացնել հարթակը բիզնես սեկտորի, խոշոր գործատուների և տարեցների համագործակցության համար՝ խթանելով բիզնեսում սոցիալական պատասխանատվությունը:

## **(2) Գործազրկություն և կարիերայի հմտություններ**

Միջնակարգ դպրոցներում բարելավել կարիերայի ուղղորդման ծառայությունների որակը և մատչելիությունը: Այս նպատակով առաջարկվում է՝

- **Մշակել ազգային շրջանակ.**

Յուրաքանչյուր միջնակարգ դպրոցում ստեղծել կարիերայի ուղղորդման ծառայություններ, որոնք աշակերտներին կմատուցեն համակարգված աջակցություն և խորհրդատվություն:

- **Մշակել և հաստատել ուսումնական ծրագիր.**

Կազմել և ԿԳՄՍՆ կողմից հաստատել մասնագիտական ուղղորդման ստանդարտացված ուսումնական ծրագիր միջնակարգ դպրոցների համար:

- **Վերապատրաստել մասնագետներին.**

Կազմակերպել կարիերայի խորհրդատուների և ուսուցիչների վերապատրաստումներ, որոնք կներառեն ժամանակակից և արդյունավետ մեթոդների կիրառումը՝ ուղղված նրանց հմտությունների զարգացմանը կարիերայի ուղղորդման ոլորտում:

- **Կարիերային վերաբերող թեմաների ինտեգրում դասերին.**

Իրականացնել ուսուցիչների վերապատրաստումներ, որոնք կօգնեն նրանց դասաժամերում ներառել կարիերային առնչվող թեմաներ՝ նպաստելով աշակերտների

հմտությունների և կարողությունների զարգացմանը:

- **Մշտադիտարկում և գնահատում.**

Մշակել և ներդնել մշտադիտարկման ու գնահատման շրջանակ և մեխանիզմ, որոնք թույլ կտան պարբերաբար վերլուծել և գնահատել դպրոցներում կարիերայի ուղղորդման ծառայությունների արդյունավետությունը:

### **(3) Հաշմանդամություն և ներառում**

Հաշմանդամության և ներառման խնդիրների լուծման համար առաջարկվում են հետևյալ քայլերը.

- **Հանրային արշավներ և իրազեկման միջոցառումներ.**

Պետական լիազոր մարմինների նախաձեռնությամբ, համագործակցելով հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ կողմերի հետ, մշակել և կազմակերպել հանրային արշավներ՝ դասընթացների կամ տեղեկատվական քարոզարշավների տեսքով: Դրանք կկազմակերպվեն ուսուցիչների, ծնողների և հասարակության լայն շրջանակի համար, որպեսզի պարզաբանվեն հաշմանդամության և ներառական կրթության տարբերությունները: Առաջարկվում է ստեղծել համապատասխան գիտելիքներով և մեթոդաբանությամբ զինված մասնագետների խումբ, որը պիլոտային կարգով ներառականության և հաշմանդամության վերաբերյալ դասընթացներ կանցկացնի 10 մայրաքաղաքային և 10 մարզկենտրոնների դպրոցներում:

- **Ներառական մշակույթի ձևավորում և խթանում.**

Պետական լիազոր մարմինների նախաձեռնությամբ, համագործակցելով հասարակական կազմակերպությունների և շահագրգիռ կողմերի հետ, մշակել և խթանել ներառական մշակույթ՝ նպաստելով բոլորի համար աջակցող միջավայրի ստեղծմանը: Նախնական փուլում ՉԼՄ-ներում և ժամանակակից տեղեկատվական հարթակներում տարածել նյութեր հաշմանդամություն ունեցող անձանց մասին՝ ներկայացնելով նրանց հաջողության պատմություններն ու այն դժվարությունները, որոնց նրանք առերեսվում են առօրյա կյանքում:

### **(4) Բռնի տեղահանում և պատկանելության զգացում**

Արցախցիներով ամենաշատ բնակեցված 55 Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերում տեղահանվածների ինտեգրման և համայնքային երկխոսության խթանման նպատակով առաջարկվում է յուրաքանչյուր մարզում, տեղական ՀԿ-ների աջակցությամբ, ստեղծել մեկ հարթակ: Այս հարթակներում նախատեսվում է կազմակերպել հետևյալ միջոցառումները, որոնց արդյունքում 56 կբարձրանա երկխոսության և ինտեգրման մակարդակը,

- **Ամսական հանդիպումներ**, որոնց կմասնակցեն տեղացիները, տեղահանվածները, ՀԿ-ների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները:

55. Armenia Emergency - Operational Overview, UNHCR, as of 2024, September 18, <https://data.unhcr.org/en/country/arm>

56. Մինչև 2025 թվականը երկխոսությանը մասնակցող անձանց թիվը կավելանա առնվազն 30%-ով, իսկ սոցիալական լարվածությունը կնվազի:

- **Շաբաթական արվեստի թերապիաներ և համատեղ կենցաղային դասընթացներ,** որոնք կնպաստեն սոցիալական ինտեգրմանը և երկկողմանի ընդունմանը:

## **(5) Կորուստ, պատերազմի հիշողություն և վերականգնում**

Այս խնդիրների լուծման համար առաջարկվում են հետևյալ քայլերը.

- **Շահառու խմբերի ներկայացուցիչների ներգրավում.**

Ներգրավել շահառու խմբերի ներկայացուցիչներին (այդ թվում կանանց) հետպատերազմյան վերականգնմանը միտված ռազմավարական պլանավորման գործընթացներում և հանրային քննարկումներում՝ ապահովելու ստեղծվելիք և կիրառվող քաղաքականությունների կարիքահենք լինելը ու արձագանքելու նրանց մտահոգություններին:

- **Բազմամասնագիտական ռեզերվի հիմնում.**

Հիմնել բազմամասնագիտական ռեզերվ, որը կներառի հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, բժիշկներ և այլ մասնագետներ: Այս ռեզերվը պետք է լինի պատրաստ արտակարգ իրավիճակներում մոբիլիզացվելու համար, իսկ նրանց ներգրավման համար մշակել արագ արձագանքման գործիքակազմ:

## **(6) Տնային աշխատանք և արժանապատվություն**

Տնաշխատանքի խնդիրների լուծման նպատակով առաջարկվում են հետևյալ քայլերը.

- **Կրթական ծրագրերի բարեփոխում.** Ստեղծել և ներդնել հատուկ կրթական ծրագրեր նախադպրոցական և դպրոցական հաստատություններում, որոնք շեշտադրում են աշխատանքի բոլոր տեսակների կարևորությունն ու արժանապատվությունը: Այս ծրագրերը երեխաների մեջ կձևավորեն այն համոզումը, որ ցանկացած աշխատանք, անկախ դրա բնույթից, հարգանքի է արժանի: Նշված մոտեցումը կարելի է ներառել դպրոցական ուսումնական ծրագրերում՝ որպես սոցիալական պատասխանատվության և քաղաքացիական դաստիարակության մաս, նպաստելով սերունդների մոտ հարգանքի ձևավորմանը աշխատանքի բոլոր ձևերի հանդեպ:
- **Հանրային արշավներ և քարոզչական քաղաքականություն.** Կազմակերպել ազգային մակարդակի հանրային արշավներ՝ նպատակ ունենալով հասարակության տարբեր շերտերում սերմանել հարգանք աշխատանքի բոլոր ձևերի նկատմամբ: Արշավները պետք է շեշտեն, որ ցանկացած աշխատանք՝ անկախ սեռից, տարիքից կամ սոցիալական դիրքից, արժանի է հարգանքի և արժանապատիվ պարգևատրության: Դրանք կարող են ներառել հաղորդումներ հեռուստատեսությամբ, ռադիոյով և առցանց հարթակներում, ինչպես նաև ակտիվ քարոզչություն սոցիալական մեդիայում:

# Եզրակացություն

Հայաստանի Հանրապետությունում խոցելի խմբերի խնդիրների լուծման համար անհրաժեշտ է համապարփակ և համակարգված մոտեցում: Աղքատությունը, հատկապես գյուղական վայրերում, շարունակում է մանկ հիմնական մարտահրավեր, և տնտեսական ակտիվության խթանմանն ուղղված ծրագրերն անհրաժեշտ են կանանց և այլ խոցելի խմբերի ավելի մեծ ներգրավվածության ապահովման համար: Գեոդերային անհավասարությունն ու կանանց տնային չվճարվող աշխատանքը սահմանափակում են նրանց տնտեսական հնարավորությունները, ուստի անհրաժեշտ է խրախուսել աշխատանքի բոլոր ձևերի արժանապատվությունն ու սոցիալական պաշտպանվածությունը:

Միայնակ ծնողները, չնայած իրենց ծանր վիճակին, հաճախ դուրս են մնում սոցիալական աջակցության շրջանակներից, ինչը սահմանափակում է նրանց տնտեսական ու կրթական հնարավորությունները: Պետական քաղաքականությունները պետք է ներառեն հատուկ ծրագրեր, որոնք միտված են այս խմբի կարիքների հասցեագրմանը:

Բռնի տեղահանված անձանց սոցիալ-տնտեսական և հոգեբանական ինտեգրման համար պահանջվում են երկարաժամկետ ռազմավարություններ, որոնք ընդգրկում են աշխատանքային հմտությունների զարգացում և հոգեբանական աջակցություն:

Խտրականության խնդիրները, որոնց բախվում են ԼԳԲՏ+ համայնքը, հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները, պահանջում են հստակ իրավական ու հասարակական միջամտություններ՝ նրանց լիարժեք մասնակցությունն ու իրավունքների պաշտպանությունը ապահովելու համար:

# Գրականության ցանկ

1. European Commission. "Single Parenthood and Social Protection: A Comparative Study in European Countries." European Commission Report, 2017: 22-30.  
<https://ec.europa.eu/social/main.jsp?catId=22&langId=en>.
2. European External Action Service. Country Gender Profile: Armenia. EU4Gender Equality Reform Helpdesk Project, funded by the European Union and implemented by NIRAS, August 2021.  
[https://www.eeas.europa.eu/sites/default/files/documents/Country%20Gender%20Profile\\_%20ARMENIA\\_ENG.pdf](https://www.eeas.europa.eu/sites/default/files/documents/Country%20Gender%20Profile_%20ARMENIA_ENG.pdf).
3. European Training Foundation (ETF). Platform Work in Armenia. 2021.  
[https://www.etf.europa.eu/sites/default/files/2021-06/platform\\_work\\_armenia\\_1.pdf](https://www.etf.europa.eu/sites/default/files/2021-06/platform_work_armenia_1.pdf).
4. Food and Agriculture Organization of the United Nations. "UN Report Finds Gender Inequalities Persisting in Rural Armenia." June 2, 2017. <https://www.fao.org/europe/news/detail/UN-report-finds-gender-inequalities-persisting-in-rural-Armenia/en>.
5. Freedom House. Why Are There No Armenians in Nagorno-Karabakh?, July 10, 2024.
6. Holland, Jason M. "Elisabeth Kübler-Ross." ResearchGate, February 2024.  
<https://doi.org/10.13140/RG.2.1.3863.2401>.
7. International Labour Organization (ILO). Domestic Workers Convention, 2011 (No. 189), adopted June 16, 2011, entered into force September 5, 2013. Available at  
[https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:12100:::NO:12100:P12100\\_ILO\\_CODE](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:12100:::NO:12100:P12100_ILO_CODE).
8. JAMnews. "Equality Day: 52% of Armenian Women Unemployed, Never Intended to Work." JAMnews, March 9, 2024. <https://jam-news.net/equality-day-52-of-armenian-women-unemployed-never-intended-to-work/>.
9. Mundel, Homer E. Poverty Measurements in Western Economies. New York: Harvard University Press, 2016.
10. Organization for Security and Co-operation in Europe (OSCE). Hate Crime Reporting: Armenia, 2022. Accessed September 9, 2024. <https://hatecrime.osce.org/armenia?year=2022>.
11. Saghumyan, Lusine. "Women and the Economy: The Intellectual Capital of Armenia." EVN Report, August 25, 2023. <https://evnreport.com/economy/women-and-the-economy-the-intellectual-capital-of-armenia/>.
12. United Nations. Convention on the Rights of Persons with Disabilities, December 13, 2006. <https://www.un.org/development/desa/disabilities/convention-on-the-rights-of-persons-with-disabilities.html>.
13. United Nations Development Programme (UNDP). 2023 Global Multidimensional Poverty Index (MPI): Unstacking Global Poverty: Data for High Impact Action. New York, 2023.  
<https://hdr.undp.org/content/2023-global-multidimensional-poverty-index-mpi>.
14. Բարխուդարյան, Էլեն. «Կանանց դերը և աղքատության վերարտադրումը», Գեներային Հասարակագիտության Ակնարկներ, 2020, 52-55.
15. «Ապտակից՝ մինչև սպանություն. ի՞նչ է ցույց տալիս հետազոտությունը». Havasar-Infohub, 2021.  
<https://havasarihub.am/%D5%A1%D5%BA%D5%BF%D5%A1%D5%AF%D5%AB%D6%81%D5%9D-%D5%B4%D5%AB%D5%B6%D5%B9%D6%87-%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%AB%D5%9E%D5%B6%D5%B9/>.
16. ՀՀ Կառավարության որոշում N1864-Ն. «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու մասին». 26.10.2023.  
[https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/kar/GV21-7B6A-EB77-37C1/1864.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV21-7B6A-EB77-37C1/1864.pdf).
17. ՀՀ Կրթության նախարարություն. «Ներառական կրթության վիճակագրական հաշվետվություն», 2022թ. <https://escs.am/am/news/9251>.
18. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով. «Պետական նպաստների մասին» (ՀՕ-154-Ն). Հաստատվել է 2014 թ. հունվարի 1-ին.  
<https://parliament.am/legislation.php?sel=show&ID=4864&lang=arm>.

19. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե. Աղքատության ցուցանիշներ Հայաստանի մարզերում. Երևան: 168.am, 2023.
20. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե. Հայաստանի սոցիալական վիճակագրություն 2023. Երևան: Վիճակագրական կոմիտե, 2023 թ. <https://armstat.am>.
21. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2024թ. Երևան: ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2024.
22. Ռ/Կ Ազատություն Հայաստան. "Երկու տղամարդու Արցախի բարբառով զրույցը՝ քրեական գործի հիմք." Ազատություն, Հունիսի 6, 2024.  
<https://www.azatutyun.am/a/erku-tghamardu-artsakhi-barbarov-zruytsy-qreakan-gortsi-himq/32981739.html>.

